



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



# ՕՐԱՑՈՅՑ

1870

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ՈՅԺԹ = 1319


Ժ.Ս. ՏԱՐԻ

Ի ԹԻՆՏՈՒՄԱ

ի սպարանի Խաչիքեան Ուսումնարանի Ազգիս Հայոց

21288

1870  
1871  
1872





21288




21288




## Գ Է Ո Ր Գ Դ,

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.



Մնցեալ տարւոյ մեծադիր օրացուցին սկիզբը ներսէս Հինգերորդ Հայրենասէր կաթողիկոսի կենդանագիրն ու կենսագրութիւնը ղնելով՝ ուրիշ վարձ չէի սպասեր իմ համազգի բանիմաց եղբայրներէն, բայց եթէ այն կենսագրութեամբը երախտագէտ լինել նոյն Հայրենասէր Հայրապետին, որոյ պաշտպանութիւնն ու հայրական քաղցր խնամքը շատերուն հետ մէկտեղ վայելած էի երբեմն իբրեւ աշակերտ ներսիսեան ազգալոյս զպրոցին. բայց որովհետեւ այլեւայլ տեղերու ազգասէր Հայերը իմ աշխատութիւնը իմ կարծածէն աւելի գնահատելով՝ տասնեւեօթը հատ շնորհակալութեան նամակներ յուղարկեցին, եւ մեր ձեռնարկութիւնը գովելով՝ խրա-

խուսեցին որ ամեն տարի մէկ մէկ նշանաւոր Հայկազ-  
նոյ կենսագրութիւնը դնեմ օրացուցիս սկիզբը, —  
նոցա հեռատես առաջարկութիւնը սիրով կատարելու  
մտօք, այս տարի՝ մեր ժամանակակից ԳԵՈՐԳ Դ ՎԵ-  
հափառ կաթողիկոսին կենդանագիրն ու համառօտ  
կենսագրութիւնը դրի:



Գ Ե Ո Ր Գ Դ Վ Ե հափառ կաթողիկոսը ծնաւ 1813  
թուականին յուլիսի 5-ին՝ Տաճկաստանի  
կոստանդնուպօլիս մայրաքաղաքին մէջ,  
եւ մկրտութեան ժամանակ *Գրիգոր* անուանեցաւ:  
Իւր կենաց առաջին տարիները՝ իւր երկիւղած ու  
առաքինի ծնողաց խնամօքն անցընելով՝ Գրիգոր պա-  
տանին մեծ սէր ցուցուց աստուածպաշտութեան,  
այնպէս՝ որ առաւօտ երեկոյ եկեղեցի երթալը ամե-  
նահարկաւոր գործերէն մէկն արած էր. ուստի եւ  
ծնողքը տղուն վերայ նաեւ ուսման սէրը տեսնելով՝  
Սամաթիոյ Յովսէփ դպրին քովէն հանեցին ու մայր  
եկեղեցւոյ ուսումնարանը տուին զինքը, յորում հըռ-  
չակաւոր Փէշտրմալճեան Գրիգոր վարժապետին  
խնամատարութեամբը ժամանակին պէտք եղած ու-  
սումը սովորեցաւ: Այսպիսի ընդունակութեամբ Գրի-  
գոր պատանին իւր համեստութեամբը, հնազան-  
դութեամբն ու խոհեմութեամբը մայր եկեղեցւոյն երի-

ցանցը հաճելի ու գովելի լինելով, եւ մի եւ նոյն ժամանակ կուսակրօնութեան ճշմարիտ սէր ցուցընելով, Կարապետ արքեպիսկոպոսը՝ որ նոյն միջոցին պատրիարք էր Կ.-Պօլսոյ, 1830-ին մայիսի 25-ին իւր հովանաւորութեանը սակ առաւ զինքը եւ պատրիարքական փոխանորդի գրագրութեան պաշտօնը յանձնեց նմա, որ չորս տարի անընդհատ ու գովելի ծառայութեամբ կատարեց: — Կարապետ սրբազանէն յետոյ՝ երբ բարեյիշատակ Ստեփանոս արքեպիսկոպոսը Կոստանդնուպօլսոյ պատրիարք ընտրուեցաւ եւ Գրիգոր դպրին գովելի յատկութեանցը տեղեկացաւ, նախ՝ 1834-ին ապրիլի 7-ին սարկաւագութեան աստիճանը տուաւ նմա, եւ ապա 1834-ին սեպտեմբերի 1-ին վարդապետ ձեռնադրեց զինքը, եւ Գեորգ առնուանեց:

Այնուհետեւ Գեորգ վարդապետի առաջեւ բեմբասացութեան ընդարձակ ասպարէզ բացուելով՝ իւր համեստ ընթացքովն ու հոգելից քարոզներովը հետզհետէ այնպիսի նախանձելի անուն հանեց, որ հայ ամիրաներուն խնդրանօքն ու պատրիարքին հրամանաւը քանի մի տարի քարոզիչ կարգեցաւ Խասգիւղի մէջ, ուր ոչ միայն տեղւոյն Մ. Մսիսլուս եկեղեցին պայծառացոյց, այլ եւ քանի մի ամիրայից, զլիաւորապէս ձէզայիրցեան Մ. ամիրային սիրտն ու սէրը գրասելով՝ նորա շնորհիւն ու ձեռնտուութեամբը տեղւոյն դպրոցը կանոնաւոր ուսումնարանի փոխեց, որոյ յառաջադիմութեանը ամենայն կերպով օգնեց:

Միջագիւղի (*Orpufkoj*) մէջ եւս բաւական ժամանակ քարոզչութեան պաշտօն կատարեց, որով տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյն պայծառութեանը հետ՝ ուսումնարանին բարեկարգութեանը եւս մեծապէս խնամք տարաւ: Այս միջոցները, այսինքն Ստեփանոս եւ Աստուածատուր արքեպիսկոպոսաց պատրիարքութեան օրերն էր ահա, որ նոցա փոխանորդութեան պաշտօնը արժանապէս կատարելով՝ Պրուսացիք քանի մի անգամ միաբանական խնդրագիրներ յուղարկեցին, որով եւ Սրբազան պատրիարքին հաւանութեամբը 1844-ին Առաջնորդ նշանակուեցաւ Պրուսայի ազգայնոց:

Գէորգ վարդապետը, որ լաւ կհասկընար իւր առաջնորդական սուրբ պարտաւորութիւնը, Պրուսա երթալէն վերջը ամեն բանէն աւելի ուշադրութիւն դարձուց քաղաքին մէջի 7000-ի չափ հայազգի ժողովրդոց դրութեանը. ուստի եւ որչափ որ նոցա առ ինքը ցուցուցած որդիական սէրը տեսնելուն վերայ ուրախացաւ, այնքան ալ նոցա քանի մի աչքի զարնող պակասութեանցը վերայ տրտմեցաւ. որով եւ իւր առ պատրիարքն ուղղած նամակին մէջ այսպէս գրեց.

« . . . Յետ ժամանելոյս իմոյ աստ ի Պրուսա, մի  
« ի ցաւալի պակասութեանց տեղւոյս տեսի այն՝ զի  
« չեւ հասեալ մանկան յերկոտասան կամ յերեքտասան  
« սան ամ հասակի, յորում սէրն հմտութեանց մեծա-  
« պէս սկսանի աճել, հանեալ յուսումնարանէն տան

« յարհեստ ծառայական. եւ միւս եւս՝ զի առհասարակ  
« բակ բնակիչք տեղւոյս տաճկականաւն վարին լեզուաւ.  
« իսկ առ կանայս գրեթէ անլուր է բնաւին հայերէնն :  
« Սակայն ի դարման այսր ամենայնի փոյթ  
« յանձին կալայ ըստ պարտաւորութեանս՝ նախ յորդոր  
« լինել ժողովրդեան յուսումնասիրութիւն եւ յազգասիրութիւն,  
« եւ ապա պատուէր ետու դաստիարակացն եւ աշակերտաց հայերէն խօսել ի դպրոցին :  
« Իսկ վասն առ տակաւ տակաւ արծարծելոյ եւ ի մէջ  
« կանանց զմայրենին մեր լեզու, յուսամ ոչ յետ քաղ-  
« մաց յաւելուլ եւ զդպրոց մի օրիորդաց, հաճու-  
« թեամբ Ամենապատիւ Սրբազնութեան Ձերոյ եւ սա-  
« տարութեամբ ազգասէր իշխանաց քաղաքիս » (\*):

Այս նամակին վերայ պատրիարքին կողմանէ քաջա-  
լերութիւն առնելով՝ Գէորգ առաջնորդը մէկ կողմէն  
իւր պարզ ու ազգասիրական քարոզներովը եկեղե-  
ցեաց մէջ զժողովուրդը յուսումնասիրութիւն եւ ի  
հայախօսութիւն յորդորեց, եւ միւս կողմէն՝ ոչ միայն  
հրամանը կրկնեց դաստիարակներուն՝ որ սաստիկ  
խստութիւն անեն ուսումնարանին մէջ տաճկերէն  
չխօսելու համար, այլ եւ գրեթէ ամենայն օր անձամբ  
դպրոցները յաճախելով՝ հայերէն չխօսողները սաստեց

(\*) Այս եւ սորա նման քանի մի նամակներ ու տեղեկութիւններ  
ընդունելով Կոստանդնուպօլսէն՝ շնորհիւ մեծապատիւ Պ. Ա. ձեռնի,  
պարտաւոր կճանաչեմ զիս հրապարակաւ մատուցանել նմա իմ առ ի  
սրտէ շնորհակալութիւնը. ավստաստով որ նորա համեստ բնաւորութիւնը  
չժողուց իւր ազգասէր անունը պարզապէս յայտնելու :

Եւ հայերենի վարժողներուն զանազան գրքեր ընծայելով վարձատրեց ու քաջալերեց: Սոյն ընթացքը բռնելով քահանայից եւ վարժապետաց հետ, որ առանց ստիպողական հարկի տաճկերէն չխօսին, իւր նպատակին մէջ մեծապէս յսջողեցաւ: Այնուհետեւ տղայոց դպրոցը հետզհետէ բարեկարգ ուսումնարան դարձրնելով՝ այլ եւ այլ լեզուաց վարժապետներ հրաւիրեց, որով գաղղիարէն, տաճկերէն, յունարէն եւ պարսկերէն լեզուաց դասախօսութիւններն սկսան:

Եւ որովհետեւ Պրուսայի եկեղեցւոյ սրահին մէջ եղած օրիորդաց դպրոցը բաւական հեռի կրնկներ միւս թաղերուն մէջ բնակող հայ աղջկանց բնակարաններէն, Գէորգ վարդապետը իւր նամակին խօսքը կատարելով՝ քիչ ժամանակէն օրիորդաց նոր դպրոցն եւս բացաւ, յորում 120 աշակերտուհիք կդաստիարակուէին իւր առաջնորդութեան ժամանակ: Թէ հին եւ թէ նոր դպրոցները սրբոց Հռիփսիմեանց եւ Գայիանեանց պանծալի անուանը նուիրելով՝ կարգադրեց որ դպրոցին մէջի աշակերտուհիները՝ իրենց պաշտպան կուսանաց տօներուն օրերը՝ իրենք երգեն նոցա համար շարադրած բոլոր շարականները, որով տշակերտուհեաց ծնողքն ու ազգականքը աւելի ջերմեռանդութեամբ լցուած խուռն բազմութեամբ եկեղեցի կրդիմէին: Ասկէց վերջը հաստատեց ճրագալուցի երեկոները գրքերուն կէսը տղայոց եւ կէսը աղջկանց կարդացընելու սովորութիւնը, որ ի վաղուց հետէ կոստանդնուպօլսոյ մէջ սովորական եղած էր:

Եւ այսպէս մինչդեռ Գէորգ առաջնորդը ազգասէր իշխանաց հետ միացած Պրուսայի Հայոց ուսումնական դաստիարակութեան հիմը՝ Լուսաւորչի Ս.Ռաֆէլական Վիմին վերայ հաստատելու հետ էր, քաղաքին քանի մի գիւղօրէից իշխաններն եւս մահահանգոյն թմրութենէ արթընցածի նման, իրենք ալ սկսան նոյն առաջնորդին կարգաւորութիւնը խնդրել իւրեանց ղրպրոցներուն համար. որով Գէորգ առաջնորդը անձամբ երթալով *Եհնիճե* ու *Ճերրահ* կոչուած գիւղերը՝ ըստ կարելոյն ղպրոցները բարեկարգեց, եւ քանի մի աղքատ պատանիներ առնելով՝ հետը Պրուսա տարաւ, որք տեղւոյն ուսումնարանին մէջ իւրեանց ուսման ընթացքն աւարտելէն վերջը՝ յիշեալ գիւղերուն մէջ ուսուցիչ եղան:

Սոյն միջոցներն էր ահա, որ Պրուսայի Հայ առաջնորդին գովելի համբաւը աշխարհիս շատ տեղերն ու գլխաւորապէս Տաճկաստանի հայկազանց եւ Փոքր Ասիոյ այլ եւ այլ ազգաց մէջը տարածուելով՝ Հայ ազգութեանը նոր պարծանք կաւելնար. ուստի եւ Ռուսաց Վսեմափառ Կայսրեղբայր եւ Մեծ Իշխան Կոստանդին Նիկոլայեւիչը (1845) Պրուսա պատահելով, Գէորգ առաջնորդի քրիստոնէական հրաւէրը սիրով ընդունեց, եւ երեք օր առաջնորդարանին մէջ կենալէն վերջը՝ մէկ պատուական մատանի ընծայեց իրեն, իբրեւ յիշատակ նորա հիւրասէր եւ քաղցր բնաւորութեանը:

Այս ազգային բարեկարգութեանց վերայ հազիւ թէ երկու տարի անցաւ, Գէորգ առաջնորդին բարի բարի

համբաւները հետզհետէ հռչակուելով՝ Տաճկաց Սուլթան Ապտիւլ-Մէճիտ կայսրը 1846-ին մէկ ականակուռ շքանշան յուղարկեց իրեն: Մէկ տարիէն ետքն ալ, այսինքն 1847-ին ըստ փափաքանաց ժողովրդեան եպիսկոպոսութեան աստիճանն ընդունելու համար Պրուսայէն մեկնելով՝ դէպ ի Ս. Էջմիածին ուղեւորեցաւ: Բայց որովհետեւ այն միջոցները Ներսէս կաթողիկոսը Թիֆլիզ կգտնուէր եւ ազգային բազմատեսակ գործերով զբաղած էր, ուստի ըստ հաճութեան նորին Թիֆլիզ գնաց, ուսկից 1848-ին Կաթողիկոսին հետ մէկտեղ Ս. Էջմիածին վերադարձաւ եւ եպիսկոպոսութեան բարձր եւ սրբազան աստիճանն ընդունեցաւ:

Ձեռնադրուելէն յետոյ Գէորգ եպիսկոպոսը՝ Ներսէս կաթողիկոսի հայրապետական կոնդակաւն իւր վիճակը դառնալով՝ ամբողջ տասը տարի եւս իբրեւ եպիսկոպոս հովուեց իւր սիրելի ժողովուրդը, մինչեւ որ 1858-ին Տաճկաստանի ազգային ընդհանուր ժողովոյն քուէարկութեամբ՝ Կոստանդնուպօլսոյ պատրիարք ընտրուեցաւ, եւ Պրուսայէն Պօլիս հրաւիրուելով՝ Տաճկաց կայսեր ներկայանալէն վերջը՝ պատրիարքական աթոռը նստաւ:

Այնուհետեւ Գէորգ արքեպիսկոպոսը մեծ ուշադրութիւն դարձրնելով իւր պատրիարքական կառավարութեանը վերայ՝ ազգային գործերը անձնանուիրութեամբ հոգաց, բայց երկու տարիէն յետոյ ժամանակին քանի մի պարագաները իւր սկզբանցը անյարմար տեսնելով՝ 1860-ին կամովին հրաժարեցաւ

պատրիարքութենէն. ընդ որ Պօլսոյ ազգայնոց հետ մէկտեղ Տաճկաց սուլթանն եւս իւր ցաւակցութիւնը յայտնելով, իւր առ պատրիարքն ունեցած հաւատեացը նշան՝ նախ 2000 դահեկան ամսական ռոճիկ նշանակեց նմա, եւ յետոյ Մէճիտիէյի Երկրորդ Կարգի շքանշանը շնորհել բարեհաճեցաւ, որ մինչեւ նոյն ժամանակները ուրիշ ազգաց պատրիարքներուն չտրուիլը կ'պատմեն:

Պրուսացիք Գէորգ պատրիարքին հրաժարիլը լսելով՝ իսկոյն միաբանական առաջարկութեամբ խնդրեցին որ դարձեալ դառնայ իւր սեպհական առաջնորդութեան աթոռը: Գէորգ արքեպիսկոպոսն եւս նոցա թախանձանացը զիջանելով՝ երբ 1861-ին Պրուսա դարձաւ, իրեն մեծ ուրախութիւնն եղաւ ազգային երկսեռ դպրոցաց կանոնաւոր յառաջադիմութիւնն ու նոցա աշակերտաց եւ աշակերտուհեաց հայերէն լեզուախօսակցութիւնն իւր ականջովը լսելը. ուստի եւ առաջինէն աւելի սիրով սկսաւ յաճախել դպրոցները, ու զդաստիարակները քաջալերելով՝ երկու սեռի մանկանց եւս յուսումնասիրութիւն եւ յառաջադիմութիւն յորդորել:

Մինչդեռ այսպիսի գովելի հիման վերայ առաջնորդը, դաստիարակներն ու ժողովուրդքը ձեռք ձեռքի տուած ու սերտ սիրով միացած՝ Պրուսայի ազգայնոց ապագայ վիճակը բարոյականութեամբ եւ քաղաքականութեամբ բարւոքելու վերայ էին, եւ ահա 1863-ին տեղւոյն աշխարհաճանօթ հրդեհը պատահեցաւ, որով

Կեսարացի Պօղոս արքեպիսկոպոսին կառուցած Ս. Աստուածածին կոչուած յախճապակազարդ եկեղեցին, տղայոց եւ աղջկանց դպրոցները, 1833-ին եղեսիացի Յարութիւն եպիսկոպոսի շինած գեղեցկադիր ու բարձրահայեաց առաջնորդարանը եւ ուրիշ՝ մերայնոց ու օտարաց շատ շինուածքները երկու օրուան մէջ մոխիր դարձան:

Գէորգ արքեպիսկոպոսը, որ այս ազգային թշուառութեանցը ականատես էր, հրդեհէն վերջը մէկ ազգային ժողով արաւ, յորում վնասեալ Հայերը մխիթարական խրատներով քաջալերելէն ու հրկիզեալ աղքատներուն թէ փողով եւ թէ կերակրով օգնելէն յետոյ, անձամբ խոստացաւ Տաճկաց կայսեր ու Կոստանդնուպօլսոյ ազգայնոց ձեռնտուութեանը դիմել, եւ յաջողութեամբն Աստուծոյ այն բաղդին ձախորդութենէն աւերակ դարձած տեղերը վերստին նորոգել. ուստի եւ 1864-ին սկիզբները Կ.-Պօլիս գնաց, ուր ամեն տեղ իւր պատկառելի այցելութեամբը պէտք եղածին չափ ընդունելութիւն գտնելէն յետոյ, ամենէն եւս չափաւոր ձեռնտուութիւն ընդունեցաւ, եւս առաւել Տաճկաց սուլթանէն, որ Գէորգ արքեպիսկոպոսին ազգասիրական նպատակը գովելով՝ մէկէն 50 հազար օսմանեան դահեկան հրամայեց տալու արքունի գանձէն, որով եւ սրբազան առաջնորդը տակաւին Կոստանդնուպօլսէն շեւած, գրաւոր հրաման արաւ Պրուսայի Յանձնաժողովոյն որ ամենէն առաջ ազգային ուսումնարանին կառուցումն սկսին: Յետոյ քանի մի

ամիս Պօլիս կենալով, ու հետզհետէ ժողոված զրամական նուէրները ցուցակաւ հանդերձ Յանձնաժողովոյն ձեռքը հասուցանելով՝ վերջապէս ինքն ալ դարձաւ Պրուսա, ուր քիչ ժամանակէն այն եռայարկ ուսումնարանին շինութիւնն աւարտուելով՝ հանդիսաւոր կերպով օրհնեց ու Ս. Գեորգեան ուսումնարան անուանեց:

Սյնուհետեւ սկսաւ առ ժամանակեայ ծածկեալ մեծ եկեղեցին եւս ի հիմանց կառուցանել. բայց շինուածքին նկատմամբ մէկ ընդհանուր հաշիւ անելէն վերջը՝ երբ տեսաւ որ ժողոված փողը քիչ պիտի գայ իրենց ձեռնարկութեանը, ժողովրդոց բանւոր մասը գեղեցիկ եւ ազդու խրատիւք աշխատելու հրաւիրեց, ու ինքն ալ նոյն աշխատութեան մէջ անձամբ օրինակ լինելով՝ այնչափ շատցաւ ազգասէր բանւորաց թիւը, որ երկու տարուան մէջ վերջանալիք ու միլիոնաւոր դահեկանաց կարօտ դպրոցաց ու եկեղեցւոյն շինուածքը՝ ութն ամսուան մէջ չորս հարիւր հազար դահեկանով վերջացուց, եւ մեծ ու շքեղ հանդիսով օրհնութեան եւ օծութեան համար սահմանեալ արարողութիւնը կատարեց: — Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Թողունք առ այժմ Պրուսացիներն իրենց բազմադիւն քրտանց պտուղները վայելելու, եւ դառնամբ տեսնեմք թէ ինչ վիճակի մէջ էր այս միջոցին՝ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Հայաստանեայցս Լուսաւորչի երկնահաստատ նուիրական Աթոռը:

Մատթէոս Ա. Կ.-Պօլսեցի կաթողիկոսը, որ Ներսէս Ե-ի մահուանէն յետոյ 1858-ին մայիսի 20-ին Լուսաւորչայ Աթոռակալ ընտրուեցաւ, սոյն միջոցին, այսինքրն 1865 թուականի օգոստոսի 22-ին վախճանելով, Աթոռը մէկ ամբողջ տարի այրիացած՝ սեւաթոյր քողով ծածկուած մնաց, մինչեւ որ 1866-ին սեպտեմբերի 17-ին Ս. Էջմիածնի Մայր վանքին մէջ գումարւած ազգային ընդհանուր ժողովոյն քուէարկութեամբ, Պրուսայի առաջնորդ Ամենապատիւ Գէորգ արքեպիսկոպոսը Ընդհանրական Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելով՝ Աթոռն իւր առաջին պայծառութեանը փոխեցաւ :

Նոր Կաթողիկոսին ընտրութիւնը՝ երբ ըստ Սահմանադրութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ ի Ռուսաստան, Ռուսաց Օգոստափառ կայսեր հանութեամբը վաւերացաւ, 1867-ին յունուարի 15-ին Պօլսոյ ազգայնոց կողմանէ Պրուսա եկած հրաւիրակներուն ուղեկցութեամբը՝ նորընտիր կաթողիկոսն իւր 22 տարի հովուած ժողովուրդը կրկին եւ կրկին օրհնելէն ունոցա ապագայ բարօրութեանց մէջ նոր յոյսեր տալէն յետոյ՝ մեկնեցաւ Պրուսայէն, եւ Պօլսոյ Ռուսաց դեսպանատան *Թարման* կոչուած շոգենաւովը՝ նոյն ամսոյ 16-ին Տաճկաստանի մայրաքաղաքը հասաւ, ուր Վսեմափայլ Իգնատիեվ դեսպանին ներկայանալուն պէս՝ իսկոյն Ռուսաց Օգոստափառ կայսեր կողմանէ վեղարին ճակատը կրելու ականակուռ եւ ծանրագնի խաշն ընդունեցաւ :

Էջմիածնի սրբազումար Սիւնհոգոսն ալ նորրնտիր Կաթողիկոսի հաստատութեան շրջաբերականը յուղարկելով, յունուարի 15-ին ամեն տեղ սկսան պատարագին մէջ Նոր Կաթողիկոսին անունը յիշել. բայց ամենէն աւելի փառաւոր հանդիսով յիշատակութեան սկսիլը Թիֆլիզու մէջ եղաւ՝ հետագայ կերպիւ.

Մակար արքեպիսկոպոսը, որ մինչեւ ցայժմ Առաջնորդ է Վրաստանի Հայոց, Ս. Էջմիածնայ Սիւնհոգոսի շրջաբերական հրամանն առնելուն պէս՝ հայ լրագրաց միջոցաւ յունուարի 15-ին, որ կիրակի օր էր, նորրնտիր կաթողիկոսի հաստատութեան պատճառաւ զժողովուրդը վանքի եկեղեցւոյն մէջ պատարագին ներկայ լինել հրաւիրեց. եւ իւր առ ի սրտէ ուրախակցութիւնը յայտնելուն նշան, նախ՝ սուրբ պատարագն անձամբ մատոյց եւ ապա մէկ պարզ ատենախօսութիւն արաւ, յորում թէ նորրնտիր Կաթողիկոսի համառօտ պատմութիւնն անելով՝ նորա բազմակողմանի արժանաւորութիւնները բացատրեց, եւ թէ միանգամայն ժողովրդոցը ապագայ յոյսեր տալով՝ քաջալերեց զիրենք:

Պատարագէն յետոյ Սրբազան ժամարարը Թիֆլիզու Հայոց պատուաւոր անդամներն ու Ռուսաց արքեպիսկոպոսը կերակուրի հրաւիրեց, ուր Օգոստափառ Կայսեր եւ մեր նորրնտիր Հայրապետի, եւս եւ ներկայ գտնուող ռուս արքեպիսկոպոսին կենացը համար վայելուչ բարեմաղթութիւններ անելով՝ Ս. Էջմիածնի միաբաններուն հետ սրտով ուրախակից եղաւ:

Այս յայտնի է որ Ս. Էջմիածնի Սիւնհոգոսին կարգադրութեամբը՝ նորընտիր Կաթողիկոսին Ռուսաստանէն հրաւիրակներ գնացին յունուարի 29-ին. Սիւնհոգոսի կողմէն Ջալալեան Սարգիս արքեպիսկոպոսը, իսկ Ռուսաց Կառավարութեան կողմէն *Ջիւնովիեւլ* գորագլուխը, որք փետրուարի սկիզբները Կաստանդնուպօլիս հասնելով՝ Վեհափառ Հայրապետին ընտրութիւնը շնորհաւորցուցին ի դիմաց Ռուսաստանի Հայոց եւ Տէրութեան:

Այնուհետեւ Գէորգ Կաթողիկոսը ճանապարհի պատրաստութիւն տեսնելով՝ Տաճկաց քանի մի նախարարներուն, այսինքն մեծ եպարքոսին ու արտաքին գործոց պաշտօնէին այցելութիւններ արաւ եւ ընդունեցաւ, եւ ապա մարտ ամսուն սկիզբները՝ Պէշիքթաշի պալատին մէջ վերջին տեսութեան առթիւ Տաճկաց Ապտիւլ-Ազիզ սուլթանին ներկայացաւ, որով եւ Մէճիտիէյի առաջին կարգի շքանշանն ընդունեցաւ:

Մարտի վերջերը Կոստանդնուպօլսոյ ազգայնոց փառաւոր ուղեկցութեամբը հրաւիրակաց հետ մէկտեղ Տաճկաց մայրաքաղաքէն մեկնեցաւ եւ 31-ին Փոթի հասաւ, ուսկից ալ ապրիլի 6-ին Մցխէթա, որ է Վրաց լուսաւորչի սրբուհւոյն Նունեայ քարոզութեան քաղաքը, եւ յորում Հայազգի իշխանները մեծաձախ ընթրիք պատրաստած էին:

Միւս օրը՝ ապրիլի 7-ին վայելուչ փառքով ու պատուով Թիֆլիզուն մօտեցաւ Վեհափառ Կաթողիկոսը, ուր քաղաքացի Հայերն ու օտարազգիները *Վերսա* կո-

չուած քաղաքին մուտքէն սկսեալ մինչեւ Վանքի եկեղեցին (որ երկու վերսէն կամ 1000 ձողաշափէն աւելի տեղ է) անհամար բազմութեամբ բոլոր ճանապարհը բռնած էին: Կովկասու Փոխարքայ Վսեմափառ եւ Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայեւիչն ալ իւր սեպհական կառքը յուղարկել էր նորրնոտիր Կաթողիկոսն ընդունելու համար:

Ճիշդ 12 էր ժամը, երբ այն ահագին բազմութեան հետ մէկտեղ Փոխարքայի պալատին առջեւէն անցնելով՝ փառաւոր հանդիսով Աղեքսանդրեան հրապարակը մտաւ Վեհափառ Կաթողիկոսը: Այստեղ Թիֆլիզու առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը իւր բոլոր եկեղեցականաց հետ զգեստաւորուած ու մեծ թափօր կազմած՝ նորին վեհափառութեանը կսպասէր, որ կառքէն իջնելով եւ ձեռքը խաչ ու գաւազան առնելով՝ վարդագոյն ամպհովանոյ տակ կանգնեցաւ, զոր քաղաքին պատուաւոր իշխաններէն չորս հոգի վերուցած էին. զկնի որոյ թափօրաւորները 25 եկեղեցեաց զանգակնահարութեամբը յառաջ շարժելով՝ Վանքի մայր եկեղեցին գնացին:

Ճանապարհին նորրնոտիր Հայրապետը իւր աջ ու ծախ կողմը անդադար խաչակնքելով օրհնութիւն կուտար ժողովրդոց: Երկու աւագ սարկաւազունք կաթողիկոսական քօղը կտանէին առջեւէն, երկու բուրվառակիրք անընդհատ խուկ կծխէին եւ 100-էն աւելի քահանայք ու դպիրք ներդաշնակ ձայնով «Հրաշափառ Աստուած» իմաստալից շարականը կերգէին,

Թող պատկերակիրները, խաչվառներ տանողներն ու մոմապահները: Կէս ժամէն յետոյ Վանքի եկեղեցին հասան, յորում « Ուրնիս լեր սուրբ եկեղեցի » գեղեցկահիւս շարականէն ու մաղթանքէն վերջը, երբ Սրբազան հայրապետը Կաթողիկոսական փառաւոր Աթոռին վերայ բազմեցաւ, ժողովրդոց կողմանէ Մակար արքեպիսկոպոսը վայելուչ կերպով Կաթողիկոսի գալուստը շնորհաւորեց, եւ Վեհափառ Հայրապետն զժողովուրդն ողջունելէն ու օրհնելէն յետոյ հրապարակաւ յայտնեց իւր շնորհակալութիւնը թէ ամեն տեղի Հայերուն՝ իրենց որդիական սէրը յայտնելուն համար, եւ թէ Ռուսաց Կայսեր, որ մեր ազգի սիրոյն համար այնչափ պատիւ արած էր իրեն:

Եկեղեցիէն ելնելէն յետոյ Թիֆլիզու առաջնորդարանին դրան առաջեւը մեծապատիւ Բաստամեանց բժիշկը մէկ գեղեցիկ ճառ կարդաց, յետ որոյ նորրճատիր Կաթողիկոսը դարձեալ յայտնելով իւր շնորհակալութիւնը եւ կրկին կրկին զժողովուրդն օրհնելով առաջնորդարան մտաւ, յորում իւր գալուստը շնորհաւորեցունցին Թիֆլիզու հայազգի եւ օտար իշխանաց շատերը:

Այս երկար ճանապարհորդութենէն վերջը՝ մէկ օր հանգստութիւն առնելով, ապրիլի 9-ին, որ Ծաղկազարդի կիրակին էր, նորրճատիր Կաթողիկոսը կէսօրուան ժամը 1-ին իւր առաջին այցելութիւնն արաւ Կովկասու Փոխարքային, հետն առնելով Սարգիս եւ Մակար արքեպիսկոպոսունքը, Կոստանդնուպօլսոյ Ազ-

գային Վարչութեան եւ համայն Տաճկաստանի մէջ  
բնակող Հայոց կողմանէ ուղեկից եղող Սէթեան Յով-  
հաննէս աղան, Գալֆայեան Խորեն եւ Երուսաղեմի պատ-  
րիարքի փոխանորդ Սիմեոն վարդապետները, (այժմ  
եպիսկոպոսք) այլ եւ Մեծապատիւ Մուրատեան Մա-  
ղաֆ աղան, Նեվրուզեան Յարթըիկ Էֆէնտին եւ ու-  
րիշ քանի մի պաշտօնատեարք, որով Վսեմափառ  
Կայսրեղբայր եւ Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայեվիչը  
վայելուչ պատուով զիրենք ընդունելէն վերջը, Կայսեր  
յուզարկած ոսկեգիր Հրովարտակը տուաւ Վեհափառ  
Կաթողիկոսին, հետը մէկտեղ Ս. Աղեքսանդրի նեւա-  
ցւոյ ասպետութեան առաջին կարգի նշանները:

Ահա այն ոսկեգիր Հրովարտակին պատճէնն ու նո-  
րա հայերէն թարգմանութիւնը.

БОЖІЕЮ СПОСПѢШЕСТВУЮЩЕЮ МІЛОСТІЮ

МЫ АЛЕКСАНДРЪ ВТОРЫЙ,

ИМПЕРАТОРЪ И САМОДЕРЖЕЦЪ ВСЕРОССИЙСКІЙ,

Московскій, Кіевскій, Владимірскій, Новгородскій; Царь Ка-  
занскій, Царь Астраханскій, Царь Польскій, Царь Сибирскій,  
Царь Херсониса-Таврическаго, Царь Грузинскій; Государь Псков-  
скій и Великій Князь Смоленскій, Литовскій, Волинскій, По-  
дольскій и Финляндскій; Князь Эстляндскій, Лифляндскій, Кур-  
ляндскій и Семигальскій, Самогитскій, Бѣлостокскій, Корельскій,  
Тверскій, Югорскій, Пермскій, Вятскій, Болгарскій и иныхъ;  
Государь и Великій Князь Новагорода низовскія земли, Черни-

говскій, Рязанскій, Полотскій, Ростовскій, Ярославскій, Бѣлозерскій, Удорскій, Обдорскій, Кондійскій, Витебскій, Мстиславскій, и всея сѣверныя страны Повелитель; и Государь Иверскія, Карталинскія и Кабардинскія земли и Области Арменскія, Черкасскихъ и Горскихъ князей и иныхъ Наслѣдный Государь и Обладатель; Наслѣдникъ Норвежскій, Герцогъ Шлезвигъ-Галстинскій, Стормарскій, Дитмарсенскій и Ольденбургскій,  
и прочая, и прочая, и прочая.

Да будетъ извѣстно всему Армянскому народу, что внявъ единодушному желанію его, торжественно изъявленному въ Эчміадзинѣ въ 17 день Сентября сего 1866 года, Мы утверждаемъ бывшаго Константинопольскаго Патріарха, Брусскаго Архіепископа Кеворка въ санѣ Патріарха Эчміадзинскаго и Католикоса всѣхъ Армянъ, и да благословитъ Всевышній Верховнаго Патріарха на великое Господу служеніе ко благу и спасенію всего любезнаго Намъ Гайканскаго народа.

Дана въ престольномъ Нашемъ градѣ Св. Петра, въ лѣто отъ Рождества Христова 1866, Ноября въ 25 день, Царствованія же Нашего въ двѣнадцатое.

На подлинной Собственною Его Императорскаго Величества рукою подписано:



„АЛЕКСАНДРЪ“.

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԵՆԱՀԱՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ

## Մ Ե Ք Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ի Բ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ,


Մոսկուայի, Կիեվու, Վլադիմիրու, Նովգորոդի. ԱՐՔԱՅ Ղազանու, ԱՐՔԱՅ Աժտէրխանի, ԱՐՔԱՅ Լեհաց, ԱՐՔԱՅ Սիբերիոյ, ԱՐՔԱՅ Տաւրիկեան Բերսոնի, ԱՐՔԱՅ Վրաց. ԹԱԻԱԻՈՐ Պսկովի եւ Մեծ Իշխան Սմոլենսկի, Լիտվայի, Վոլինսկի, Պոդոլսկի եւ Ֆինլեանդիոյ. Իշխան Էստլանդիոյ, Լիֆլեանդիոյ, Կուրլեանդիոյ եւ Սեմիգալիոյ, Սամոգիթսկի, Բելոստոկի, Կորէլսկի, Տվերի, Եուգորսկի, Պերմի, Վեատսկի, Բուլղարիոյ եւ այլոց. ԹԱԳԱԻՈՐ եւ Մեծ Իշխան Նովագորոդի ստորին երկրի, Չեռնիգովի, Ռեազանի, Պոլոցկի, Ռոստովի, Եարոսլաւի, Բելոզերսկի, Ուդորսկի, Օբդորսկի, Կոնդիացոց, Վիտեբսկի, Մստիսլաւի եւ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ համօրէն հիւսիսային կողման. եւ ԹԱԳԱԻՈՐ Իբերիոյ, Քարթալինիոյ եւ Քաբարդինեան երկրին եւ Հայկական Նահանգին. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԹԱԳԱԻՈՐ եւ ՏԻՐԱՊԵՏ Իշխանացն Չերքէզաց եւ Լեռնականաց եւ այլոց. ԺԱՌԱՆԳ Նորվեգիոյ, ԴՈՒՔՍ Շլէզվիգ-Գոլտինիոյ, Ստորմարնիոյ, Դիտմարսենի եւ Օլդենբուրգի, եւ այլոց, եւ այլոց, եւ այլոց.

Յայտնի լինի բոլոր Հայոց ազգին, որ Էջմիածնի մէջ սեպտեմբերի 17-ին սոյն 1866 թուականին՝ նորա հանդիսաւոր կերպով ցուցուցած միաբանական ցլանկութեանը միտ դնելով, Մեք՝ Կոստանդնուպօլսոյ Հայոց Պատրիարք եղած՝ Պրուսայի առաջնորդ Քէորգ արքեպիսկոպոսը՝ Էջմիածնի Պատրիարք եւ ամենայն Հայոց Կաթողիկոս կհաստատէ: Ամենաբարձրեալ Աստուածը՝ Մեր սիրած բոլոր Հայերու օգտին ու

փրկութեանը համար՝ թող օրհնէ այս Յայրագոյն Պատրիարքն իւր աստուածային գերագոյն պատշօնասարութեանը մէջ :

Գրեցաւ Մեր սրբոյն Պետրոսի արքունիս քաղաքին մէջ՝ Քրիստոսի Յննդեան 1866 թուականին նոյեմբերի 23-երորդ օրը, եւ Մեր Թագաւորութեան սասնելուերորդ սարին :

Բնագրին մէջը Օգոստոսիան. Կայսեր ձեռօքն ստորագրուած է .



„ԱՂԵՔՍԱՆԴԻՐ“ :

Երրորդ օրը Վսեմափառ Փոխարքայն այցելութեան ելաւ նորընտիր Կաթողիկոսին, եւ հանդիսաւոր կերպով ընդունուելէն ու մեծարուելէն յետոյ՝ Վանքի մայր եկեղեցին հրաւիրուեցաւ, ուր Վեհ. Կաթողիկոսը քանի մի գոհացողական մաղթանք ասելով՝ նորա կրկին եւ կրկին շնորհակալութիւններն ընդունեցաւ :

Ապրիլի 16-ին Քրիստոսի Տեառն մերոյ հրաշափառ Յարութեան Զատկի կիրակին հանդիպելով՝ Վեհափառ Կաթողիկոսն ինքնին հաճեցաւ մատուցանել անմահ պատարագը, որով անթիւ բազմութիւն ժողովրդոց լցուելով եկեղեցին՝ ըստ աւուրն պատշաճի մէկ խորհրդաւոր քարոզ ասաց :

Քանի մի օրէն մեծածախ կոչուեց եղաւ Փոխարքային պալատը՝ ի պատիւ Վեհափառ Կաթողիկոսին,

ուր գրեթէ Թիֆլիզու բոլոր մեծամեծները հրաւիրուած էին: Կերակուրի ժամանակ զինուորական նուազարաններով գեղեցիկ երաժշտութիւն եղաւ, եւ բաժակները խմուեցան ի կենդանութիւն Օգոստափառ Կայսեր, Վսեմափառ Փոխարքային Կովկասու եւ Վեհափառ Կաթողիկոսին ամենայն Հայոց:

Ապրիլի 24-ին բարեհաճեցաւ Վեհափառ Կաթողիկոսն այցելութեան ելանել Հայոց եկեղեցիներուն ու նոցա ժողովրդական դպրոցներուն, ինչպէս նաեւ Բեթղէհեմի եւ Զրկինեանց եկեղեցիներուն մօտ եղած օրիորդաց դպրոցներուն: Միւս օրը գնաց Ներսիսեան Ազգային Ուսումնարանը, յորում Մանղինեանց աւագ քահանայն մէկ ճառ ասաց: Նոյն ամսոյ 26-ին Թիֆլիզու օրիորդաց առաջին կարգի ուսումնարանը գնաց, ուր հանդիսաւոր կերպով ընդունուելէն վերջը՝ պատմութեան ուսուցիչ պարոն Ստեփանէն եւս մէկ ճառ կարդաց օրիորդաց կողմանէ (<sup>1</sup>): Եւ այսպէս ամենայն օր մէկ մէկ ուսումնարան երթալով ու նոցա աշակերտաց եւ աշակերտուհեաց ուսմանը տեղեկանալով, ամեն տեղ եւս հայրական համակրութեամբ յորդորեց ու խրատեց, որ *իւրեանց մայրենի շէգունն ու կրօնը ամենայն ուշադրութեամբ նախադաս համարելով՝ Հայոց Ազգիս արժանաւոր անդամներ լինելո՞ւ պատրաստուին:*

---

(<sup>1</sup>) Այս ճառերը՝ տեղւոյս անձկութեանը նայելով՝ անելորդ համարեցինք մեջ բերել, պարտաւորուելով ասել՝ որ սոցա ամենուն գլխաւոր իմաստը գրեթէ մեկմեկու նման է, որ է իրաւացի յոյս եւ մեծամեծ բարեաց ակնկալութիւն ի մասին ուսումնական յառաջադիմութեան եւ բարոյական դաստիարակութեան Ազգիս:

Մայիսի 4-ին որոշեց Վեհափառ Կաթողիկոսը Թիֆլիզէն դէպ ի Ս. Էջմիածին երթալու: Ճանապարհորդութեան պատրաստութիւնը լսելուն պէս՝ Թիֆլիզու արհեստապետները իրենց բոլոր արհեստակիցներուն հրաման արին խանութները փակելու, որով քառորդ ժամի մէջ վանքի եկեղեցիէն սկսեալ մինչեւ քաղաքէն դուրս մէկ ժամուան տեղ անհամար բազմութեամբ լցուեցաւ: Կէսօրուան ժամը 2-ն էր երբ Վեհափառ Կաթողիկոսը կառք նստելով սկսաւ յառաջ երթալ: Սոյն միջոցին սքանչելի տեսարան կձեւացրնէին փողոցներուն աջ ու ձախ կողմերը շարուած ժողովուրդքը, որք հայրապետական կառքին անցած ժամանակը գտակները հանելով՝ երեսները կխաշակնքէին հաւատով ու նորընտիր Կաթողիկոսին օրհնութիւնը կառնէին:

*Օրրանաշա* կոչուած քաղաքի ելքին վերայ Թիֆլիզցիք կերակուր պատրաստելով՝ Վեհափառ ճանապարհորդը իւր մասնակցութեամբն ու օրհնութեամբը մեծարեց զիրենք. եւ ապա յառաջ երթալով՝ 6 օրուան մէջ երեւան հասաւ: Երկու օր եւս այն տեղ կենալով՝ Հայոց դպրոցներն աչքէ անցուց. եւ վերջապէս Մայիսի 12-ին Ս. Էջմիածին գնաց, ուր մեծ ու շքեղ հանդիսով ընդառաջ էին զգեստաւորուած վանքին բոլոր միաբանները, եւ հոգեւոր երգերով ու զանգակաց հնչմամբ սիրալիր ընդունելութիւն արին այն նորընտիր Հայրապետին, որ 19 տարի առաջ նոյն սուրբ տաճարին մէջ եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ընդունած էր բարեյիշատակ Ներսէս Կաթողիկոսէն:

Տասն օրէն վերջը, այսինքն Մայիսի 21-ին կատարուեցաւ Վեհափառ Հայրապետին Կաթողիկոս օծուելուն փառաւոր հանդէսը՝ ի ներկայութեան պատուարժան Պատգամաւորաց ամենայն Հայաբնակ կողմանց եւ անթիւ բազմութեան ժողովրդոց, որոյ անթիւ կարդացուած ճառերէն ի զատ՝ հեռաւոր տեղերէ այլ եւ այլ ուղերձներ ընդունեցաւ նա, յորոց մէկն ալ Խալիբեան Ուսումնարանիս հայկաբանութեան ուսուցիչ Պ. Մկրտիչ Պալեանի գրածն էր, այսպէս.

**Ի Ս Ո Ւ Բ Թ Օ Ծ Ո Ւ Մ Ն**

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ

**Տ Ե Ա Ռ Ն Գ Է Ո Ր Գ Ա Յ**

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ո Ւ Ղ Ե Ր Ձ.**

Հրաւէր են ձեզ, Ասքանազեան տան, ձայն տուք,  
Հրաւէր հասին ձեզ Հայրենեաց սնուք արկէք.

Ճակատ ի վեր պայծառ տարէք լուսալիր,

Զարթիր, զարթիր, Դըշխոյդ Հայոց մայր երկիր:

Մըշտադալար բարձունք զարդու ծաղկեցէք.

Ըզվաղեմի փառս ըզդիմօք ձեր արկէք.

Ի խընկաբեր դարաստանաց Ադինայ

Առցեն ծաւալ սողոխք կենաց մըշտակայ,

Երկնապարգեւ սիւք օրհնութեան անըսպառ

Ի շիրիմս հարց ի մեզ հանգիր թեւապար.

Զի բարձան ցաւք, ընդ մէջ հերձաւ սեւաթոյր  
Քօղ՝ որ պատէր ըզԳրիպորի սուրբ զԱթոռ .

Եւ Ծագեցաւ անդ ՀԱՅՐԱՊԵՏ մեզ Արփի

Որ զՕծելոց Տեառն ունի ըզտեղի,

Ըզհաւատոցն ջահ անշէջ ի ձեռին,

Իմաստութեան ուղիք ի սըրտէ ծաւալին :

Ճաճանչք հաստան Տեառն Օծելոյն ի փառաց,

Ասքանազեանք, ձեզ՝ որք յոլորտս աշխարհաց,

Ըզցուց բարձեալ ի Հայս ելէք, տուք հորդան,

Ծաւալեցէք ըզխանդս Վհհին յանդ իման .

ԸզԲարձրելոյն տեսէք զՕծեալն հոգեհուր

Եւ պատգամաց սըրբոց կացէք Տեառն ի լուր .

« Ընտրեալըդ դու, հօսին իմոյ սիրելոյ,

« Սուրբ Պաշտօնեայ ինձ արժանի միայնոյ .

« Ոգի շնորհաց իմոց ի քեզ զօրութեանց,

« Անդոյր ըզհօսան իմ հանգուսցես ի վըշտաց :

« Ցուպ՝ զոր երբեմն ազգք եւ ազինըք տեսին,

« Ըզծովն ընդ մէջ անջըրպետէր սուրբ ազին,

« Որ մարտ դընէր ընդ Ամաղէկ յաղթական,

« Մի եւս ի քեզ արդ միւսանգամ տեսցեն զայն .

« Այլ շընորհաց փառաց իմոց սքանչելեաց

« Ցուպ իմաստից նորոց տեսցեն օրինաց » : —

Իսկ ահաւոր ընդ այս պատգամ Բարձրելոյն,

Ծափ ըզծափի զւարթունք հարին սուրբք ողջոյն,

Ծագաց ի ծագս հըռչակեցաւ Տեառն բան,

Ոլորտք զդողի ընդ նոյն բարբառն հարան .


« Քեզ՝ ընդ ՊԱՐԳԵԻԴ, Տէր, գոհութիւն անւլախճան » :


Այո՛, Տէր, տուած Պարգեւիդ համար՝ « գոհութիւն անվախճան », վասն զի այս ընտիր Պարգեւդ է որ իւր ազգային բազմատեսակ գործոց մէջ ունեցած փորձ բնաւորութեամբն ու կիրթ ախորժակովը Հայաստանի որդւոցս գլխաւոր կարօտութիւնները տեսնելով՝ իւր մեծաշուք Օծութենէն անմիջապէս ետքն սկսաւ եկեղեցական ուսումնարանաց եւ ժողովրդական երկսեռ դպրոցաց համար հեռատես կանոններ դնել, բարեբարոյ դաստիարակներ կարգել ու մեր Ս.Ռաքելական Ս. Եկեղեցւոյն վարդապետութեանը համաձայն՝ պէտք եղած գրքերն ունենալու համար Ս. Էջմիածնի Ուսումնական Յանձնաժողովը կազմել, Էջմիածնի Տպարանը բարեկարգել եւ նորանոր գրատպութեանց վերայ փոյթ ու խնամք ունենալ, Ա.ՐԱ.ՐԱ.Տ անուևով ամսագիրը առաջին անգամ Էջմիածնի մէջ հրատարակուելուն վերայ իւր խորին մտադրութիւնը դարձրնել, իւր օժման տարեդարձին օրը Ս. Աթոռոյն Ուսումնարանին հիմնարկութիւնն անել հանդիսապէս, Ս. Էջմիածնի հոյակապ Տաճարին մէկ մասը վերանորոգել, եւ այլն, եւ այլն, որոց ամեն մէկուն ընդարձակ պատմութիւնը հատորներու կկարօտի:

Սակայն հարկ է խոստովանել, որ մեր այսպէս համառօտաբար յիշելուն գլխաւոր պատճառները սոքա են, որ նախ՝ մեր ուզածին չափ ստոյգ տեղեկութիւններ չունեցանք այն ազգային գործոց որպիսութեանցը վերայ, եւ երկրորդ՝ ի նոցանէ շատերը տակաւին նոր սկսուելով՝ կերպով մի անպատեհ էր դեռ ծաղիկը

չտեսած՝ պտուղներուն վերայ խօսիլը: Ուստի մեր համառօտագրութիւնը այստեղս կնքելով եւ սորա շարայարութիւնը՝ որ է ապագային ճիշդ պատմութիւնը ուրիշ սրտես հայրենասիրացը թողլով, կխնդրեմք յԱստուծոյ որ երկար կեանք շնորհէ այս մեր Բագմարդիւն Հովուապետին, որպէս զի իւր տաք սրտով սկսած ազգօգուտ ձեռնարկութիւնները հետզհետէ յառաջ տանելով գլուխ հասուցանէ ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ ի պայծառութիւն պատուական Ազգիս:

Յ. Տ.—Ա.





Բարի եկանք, հաղոր բարի  
Նոր տարի .

Ի՞նչ լուր բերիր Հայկայ որդւոց  
Այս տարի :

— Մի սրխալիր . ո՞վ իմ Հայկակ , նոր չեմ ես ,  
Կրճանաչեմ Հայկին ու Արամն , Արտաշէս .  
Բայց թէ « Հայոց ի՞նչ լուր բերիր » դու կասես ,  
Ահա պատմեմ որ լըսես .

Երբ այս անգամ ոտքըս դրրի Հայաստան  
Անգամալոյճ կին մի տեսի անտատան ,  
Որ իւր սըրտի սաստիկ ցաւէն թալկացած ,

Յուսահատեալ կար ընկած :

Նա այրի էր , խորշոմերես , սեւազգեստ ,  
Հոգւովը վառ ու նայուածքովը համեստ .

Ճանաչելով՝ կարեկցաբար վերուցի  
Ու խըղճալով ասացի .

Մայր Հայաստան, ինչո՞ւ այդպէս արխուր ես,  
Ինչո՞ւ հին հին ցաւերը միշտ նորոգես .

Միթէ չգիտես որ որդիքը ամենուստ

Այժմ եղել են պերճ՝ հարուստ :

Միթէ չգիտես որ քու որդւոցը՝ տաղեր,

Риголетто, Фенелла ներ, опер-ներ,

Կամ թէ շամպայն, մադերն, օղի, գինիներ

Ժառանգութիւն են եղեր :

Միթէ չգիտես որ Հայուհիքը գողարիկ,

Եւրոպական ճոխ հագուստով թափանցիկ

Կամ Ասիոյ կերպասներով գեղեցիկ

Կուզեն լինել նոր Ատղիկ :

Զարմանք . ինչո՞ւ ուրեմն այլոց պէս

Քու առաջուան շքեղութեամբ տիրապէս

Ձեռ զարդարուեր . — Ինչ է ցաւը անպայմաւ

Որ չես գըտներ մէկ դարման :

— Յաւս հարցանես, ճանապարհորդ խընամոտ,

Յաւրս մէկ չէ որ քեզ պատմեմ համառօտ .

Բայց որպէս զի ո՞ւր Հայ որդիքս գուն տեսնես

Նոցա իմ խօսքըս պատմես,

Ասա իրենց թէ շատ խընդրեց ձեր մայրը

Չըմոռանալ ձեր հայրենի սուրբ վայրը .

Յիշել զԱրամ, Տիգրան, Տըրդատն ու Վարդան

Եւ զիս այրիս կիսկենդան :

Յիշել զայրիս, որ շատ դարերէ հետէ,

Տարի, ամիս, շաբաթ, օր, ժամ եւ րոպէ,

Գերութեան մէջ կապրիմ յուսով որ մի օր

Տեսնեմ զիրենք զօրաւոր :

Աստ իրենց, որ ծուռ աչքով մէկմէկու

Բաւ համարին այսքան ատեն նայելու.

Ժամանակ է սիրով զիրար գըրկելու

Առ մայրն իւրեանց գառնալու:

Առ մայրն իւրեանց, որ յորդուց անհողութիւն,

Յառօրեայ կեանք, սուտ պարծանքն ու ցընծութիւն

Ապշեալ հայի, — թէ ցէրբ պիտի որդիքս հեզ

Մընան մըտօք կարճատես:

Առ մայրն իւրեանց, որ յետ մահուան իւր Գըլխոյն,

Ի Շաւարշան դաշտ կարմրերանդ սըրբագոյն

Առանձնացեալ, հըսկէ անմռունչ քաջ արանց

Հայ Ազգութեան Պաշտպանաց:

Առ մայրն իւրեանց, որ առաւօտ երեկոյ,

Ի զարգացումըն Հայրենի Հաւատոյ,

Ի գիտութիւն, ի միութիւն սուրբ սիրոյ


Մաղթէ յերկնից ի վերոյ:


Առ մայրն իւրեանց, որ վերջապէս որդուց սիրտ

Գոյն գոյն ծաղկանց նըման, կուզէ խիտ առ խիտ

Ժողովել խնամօք, ուսման ձեռքով միացնել

Ու նոր պըսակ մի հիւսել»:





Տեսարան Թիֆլիսի խաղաղարանից (1861) •

# ՕՐԱՑՈՅՑ

1870

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ՌՅԺԹ = 1319

ԺԱ. ՏԱՐԻ

Ի ԹԵՂՆՈՍԻԱ

ի սպարանի Խաչիքեան Ռառչննարանի Ազգիս Հայոց

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

Ագ. = Ագարիայի : Լտ. = Լատինացոց : Հ. = Հին տոմար.  
 Յուլեանն : Հր. = Հրեից : Յայսմ. = Յայսմաւորաց տոմար.  
 Յ. = Յունաց : Ն. = Նոր տոմար, Գրիգորեանն : Ռ. = Ռուսաց : Տճ. = Տաճկաց : Տոմ. = Տոմար հայկական : աձ. = Առաջին ձայն : ալ. = Առաջի կողմն : բձ. = Երկրորդ ձայն : բկ. = Առաջ կողմն : գձ. = Երրորդ ձայն : գկ. = Վառ ձայն : դձ. = Չորրորդ ձայն : դկ. = Վերջ ձայն : Բշ. = Երկուշաբթի : Գշ. = Երեքշաբթի : Դշ. = Չորեքշաբթի : Եշ. = Հինգշաբթի : Ուր. = Ուրբաթ : Շբ. = Շաբաթ : Կիր. = Կիրակի : Հրց. = Հարց : Հմբ. = Համբարձի : մրգ. = մարգարեին : հյրպ. = հայրապետին : եպս. = եպիսկոպոսին : պհ. = պահոց : մ. պ. = մեծի պահոց : վկ. = վկային կամ վկայից : քհ. = քահանային :



Дозволено Цензурою. С.-Петербургъ, 12 Юля 1869 г.

Редакторъ—Издатель И. ТЕРЪ-АБРАМИАНЪ.

# Ի ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

1870

ԵՒ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ ՌՅԺԹ = 1319.

Քիր տարւոյն Է. . . . .	Ն.
Եօթներեակն . . . . .	Դ.
Վերադիրն . . . . .	Ը.
Իննեւտասներեակն . . . . .	7
Տանուտերն . . . . .	ԿՈՅՍԸ.
Բուն ձայնքն աձ, քձ, գձ, դձ աջակողմեան դասուն են, սկսեալ ի բուն բարեկենդանէ.	

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆՔ ԵՒ ՄԻՋՈՅՔ ՆՈՅԻՆ.

ՕՐ ԾՆՆԴԵԱՆ . . . . .	Գշ.
Միջոց ուտիք առուրք պահօք . . . . .	27
Առաջաւորաց բարեկենդան, ի Փետրուարի . . . . .	4
ՕՐ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶԻՆ . . . . .	Շբ.
Բուն բարեկենդան, ի Փետրուարի . . . . .	22
ՕՐ ԱԻԵՏՄԱՆ . . . . .	Աւագ Երեքշաբթի.
ԶԱՏԻԿ, յԱպրիլի . . . . .	12
ԵՐԵԻՄԱՆ ԽԱԶ, ի Մայիսի . . . . .	10
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ, ի Մայիսի . . . . .	21
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ, ի Մայիսի . . . . .	31
Բարեկենդան Լուսաւորչի պահոց, ի Յունիսի . . . . .	21
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ, ի Յունիսի . . . . .	26
ՎԱՐԴԱՎԱՌ, ի Յունիսի . . . . .	19
Միջոց շաբաթք պահօք . . . . .	4
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, յՅոգոստոսի . . . . .	16
Միջոց շաբաթք պահօք . . . . .	4
ԽԱԶՎԵՐԱՅ, ի Սեպտեմբերի . . . . .	13
Ս. ԳԵՈՐԳԱՅ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, ի Սեպտեմբերի . . . . .	20
Միջոց ուտիք շաբաթք պահօք . . . . .	7
ԳԻԻՏ ԽԱԶ, ի Հոկտեմբերի . . . . .	25
ՅԻՍՆԱԿԱԳ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, ի Նոյեմբերի . . . . .	15
Ս. ՅԱԿՈՐԱՅ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, ի Դեկտեմբերի . . . . .	6
Միջոց ուտիք առուրք պահօք . . . . .	18
ՕՐ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՅԱՅՏՆՈՒՐԵԱՆ . . . . .	Գշ.

ՀՍՏ ՅՈՒՆԱՅ ԵՒ ՀՍՏ ՌՈՒՍԱՅ.


Շրջանն արեւոյ (кругъ солнца)	14
Շրջանն լուսնի (кругъ луны)	6
Եօրներեակն (вруцѣльто)	3
Ընդիկտիոնն (индиктъ)	13
Տարեգիրն (ключевая буква)	Ф
Վերադիրն (епатка)	12
Ուտեաց անուրբն (мясоястіе) եօրն շաբաթ եւ չորս օր.	
Բուն բարեկենդան (сыропустъ) ի Փետրուարի	22
Կիսապենտեկոստե (Преполовение) ի Մայիսի	6
Համբարձումն (Вознесение) ի Մայիսի	21
Պենտեկոստե (Пятидесятница) ի Մայիսի	31
Առաքելոց բարեկենդան (Петровъ мясопустъ,—заговѣнье)	
ի Յունիսի	7
Պահք առաքելոց (Петровъ постъ) երեք շաբաթ.	

ՀՍՏ ԼԱՏԻՆԱՅԻՈՅ.

Մարտիրոսագիրն	М
Կիրակագիրն.	В
Շրջանն արեւոյ	3
Ընդիկտիոնն	13
Վերադիրն	28
Շրջանն լուսնի, որ է Ոսկեթիւն	9
Եօրանասներորդաց կիրակի, ի Փետրուարի	13
Օր մոխրոց, ի Մարտի	2
Ջատիկ, յԱպրիլի	17
Համբարձումն Գրիստոսի, ի Մայիսի	26
Հոգեգալուստ, ի Յունիսի	5
Տօն Խորհրդոյ Ս. Հաղորդութեան, ի Յունիսի	16
Առաջին կիրակե Գալստեան, ի Նոյեմբերի	27

ՏԱՐԵՄՈՒՏԻ.

Թուին Հայոց ՌՅԻ (1320)	յՅգոստոսի	16
Ազարիայի ՄԾԵ (255)	ի Մարտի	21
Տաճկաց 1287	ի Մարտի	21
Հրեից 5631	ի Սեպտեմ.	14
Նոր թուականին 1871	ի Դեկտեմ.	20



### ՅՈՒՆՈՒԱՐ

(31 օր է, յորոց 4-ը կիրակէ եւ 3-ը տօն.)

13 1 † Եղ. աձ. Գ օր պհց. Ծննդեան. ԿԱՂԱՆԴ. եւս Յունաց 11  
 եւ Ռուսաց, որոց եւ տօն անուան Տեառն եւ յիշատակ  
 Բարսղի հայրապետին. — Ըստ տոմարին մերոյ Քաղոցի  
 19.— Ըստ Յայսմաւորաց Քաղոցի 24.— Ըստ Ազարիայի  
 Արամայ 17.— Լատինացոց Յունուարի 13, Տօն անուան  
 Յիսուսի եւ Վերոնիկայ կուսին. — Տաճկաց Շէփվաշի  
 11 եւ Գասրալի 68 — Հրեից Սեքսարի 11.

☉ Արեգակն ելանէ ժ. 7, վ. 38.  
 — մտանէ ժ. 4, վ. 41.

14 2 Ուր ալ. Դ օր պահոց Ծննդեան. — Ռ. Սեղբեստրոսի 12  
 Հռովմայ հայրապետին.

— Ծնունդ Վսեմափառ. եւ Կայսերազն Մեծի Իշխանին  
 Ալեքսեայ Ալեքսանդրովիչ (յամին 1850.)

15 3 Շր. բձ. Ե օր պահոց Ծննդեան. Բարսղի հայրապետին 13  
 եւ եղբօր նորին Գրիգորի նիւսացւոյն, Սեղբեստրոսի  
 Հռովմայ հայրապետին եւ արբայ Եփրեմի խուրին ա-  
 սորւոյ. — Ռ. Մաղաքիայ մարգարէին.

16 4 † Կիր բկ. 2 օր պահոց Ծննդեան. Հարց դձ. „Միա- 14  
 ծին որդի Աստուծոյ“. Հմբ. բկ. „Կանխեցին“ *ցվերջն.*  
 — Ռ. 72 աշակերտացն Քրիստոսի.

17 5 Բշ գձ. Ճրագալոյց Ծննդեան եւ Մկրտութեանն Քրիս- 15  
 տոսի. Նաւակատիք յերեկոյին. — Յ. եւ Ռ. Ճրագալոյց  
 Յայտնութեան. — Լոտ. Անտոնի անապատականին.

— Բոլորական խաւարումն լուսնի, ըստ մասնէ տեսանելի ի Կոս-  
 տանդնուպօլիս, որ սկսի ի ժ. 22, ը. 11 եւ տեւէ ցժ. 1, ը. 50.

Ն.

Լ.

ՅՈՒՆՈՒԱՐ

18 6 † Գշ. գկ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ. 16  
Ուտիք է մեզ 8 օր անմիջոց. — Յ. եւ Ռ. Աստուածայայտնութիւն.

☉ Ծնունդ լուսնի. — Յուրտ եւ փոփոխական.

19 7 † Գշ. դձ. Բ օր Ծննդեան եւ Յիշատակ մեռելոց. — 17  
Յ. եւ Ռ. Յովհաննոս Կարապետին.

20 8 Եշ. դկ. Գ օր Ծննդեան. — Ռ. Գեորգեայ եւ Եմելիանոսի. 18

21 9 Ուր. աձ. Դ օր Ծննդեան. — Ռ. Պողիքտոսի վկային. 19

22 10 Շր. ալ. Ե օր Ծննդեան. — Ռ. Գրիգորի նիւսացւոյն եւ Գոմետիանոսի մելիտացւոյն. 20

23 11 † Կիր. բձ. Զ օր Ծնն. — Ռ. Թեոդոսի կապաղովկացւոյն. 21

☉ Արեգակն ելանէ ժ. 7, վ. 31.  
— մտանէ ժ. 4, վ. 54.

24 12 Բշ. բկ. Է օր Ծննդեան. — Ռ. Տատիանեայ կոնսին. 22

☾ Վերջին քառօրդ լուսնի. — 2 իւնաբեր հողմունք.

25 13 Գշ. գձ. Ը օր Ծննդեան եւ Տօն Անուանակոչութեան Տեառն. — Ռ. Երմիղայ եւ Ստրատոնիկեայ. — Տոմ. Արաց. 23

26 14 Գշ. գկ. Պահք. — Ռ. Հարցն նահատակելոց ի Սինա. 24

27 15 Եշ. դձ. Տօն Ծննդեան Յովհաննոս Կարապետին. — Ռ. Պօղոսի անապատականին եւ Յովհաննոս գրեցւոյն. — 25  
Լտ. Յովհաննոս Ոսկեբերանին. — Ագ. Ովղան.

28 16 Ուր. դկ. Պահք. — Ռ. Լուծումն շղթայից սրբոյն Պետրոսի. 26


29 17 Շր. աձ. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին եւ Արիստղոմայ սարկաւազին. — Ռ. Անտոնի անապատականին. — Տճ. Ախրրը Էրպային. Վերջ քառասուն առօրց առաջնոյ մասին ձմերան. 27

30 18 † Կիր. ալ. Ա, գկնի Ծննդեան. Հրց. դձ. „Ծագումն միածնի“. Հարսանիք. — Ռ. Աքանասի եւ Կիրղի հայրապետացն Աղեքսանդրիոյ. — Տճ. Էլիվկի խամսին. Սկիզբն յիսուն առօրց երկրորդի մասին ձմերան. 28

31 19 Բշ. բձ. Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի ճգնաւորացն. — Ռ. Մակարայ եգիպտացւոյն. 29

Ն.

Լ.



1 20 Գշ. բկ. Թեոզոսի բազաւորին եւ մանկանցն եփեսոսի. — 30  
Ռ. Եւթիմոսի ճգնաւորին. — Լտ. ՓԵՏՐՈՒԱՐ.

⊙ Ծնունդ լուսնի. — Կարկտախառն անձրեւք.

2 21 Գշ. գձ. Պահք. — Ռ. Մաքսիմոսի խոստովանողին. — 1  
Լտ. Տեառնընդառաջ. — Տճ. Զիշղգատե. — Հր. Աղար.

⊙ Արեգակն ելանէ ժ. 7, վ. 20.  
— մտանէ ժ. 5, վ. 7.

3 22 Եշ. գկ. Կիրակոսի եւ Յուդիտայ, եւ Գորղիոսի, Պո- 2  
ղիքտոսի եւ Գրիգորիսի. — Ռ. Տիմոթեոսի եւ Անաս-  
տասայ վկայից.

4 23 Ուր. դձ. Պահք. — Ռ. Կղեմայ եպիսկոպոսին եւ Ագա- 3  
թանգեղոսի վկային.

5 24 Շր. գկ. Աքանասի, եւ Կիւրղի, եւ Գրիգորի աստուա- 4  
ծարանին. — Ռ. Եւքսինեայ կուսին.

6 25 † Կիր. աձ. Բ, գկնի Ծննդեան. Հրց. գկ. „Այսօր գե- 5  
նաւ“. Հմբ. գձ. „Հրաշալի“ *ցվերջն*. Հարսանիք. —  
Ռ. Գրիգորի աստուածարանին.

7 26 Բշ. ակ. Վահանայ գողբնացւոյն, Եւզինեայ կուսին, եւ 6  
հօր նորա Փիլիպպոսի, եւ մօրն Կղօղեայ, եւ երկուց  
ներքինեացն. — Ռ. Քսենոփոնի վկային.

8 27 Գշ. բձ. Եւզինեոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կան- 7  
դիտոսի եւ Ակիւղասայ. — Ռ. Դարձ նշխարաց Յովհ.  
ոսկերերանին.

9 28 Գշ. բկ. Պահք. — Ռ. Եփրեմի խուրին ասորւոյ. 8

⊙ Առաջին քառորդ լուսնի. — Փսիոխական.

10 29 Եշ. գձ. Անդրիանոսի, եւ կնոջն Անատոյայ. եւ Թեո- 9  
զորոսի եւ Ելեթիւրոսի վկայիցն. — Ռ. Իգնատիոսի  
աստուածազգեաց հայրապետին.

11 30 Ուր գկ. Պահք. — Ռ. Հայրապետացն Բարսղի, Գրի- 10  
գորի եւ Յովհաննու ոսկերերանին.

12 31 Շր. դձ. Ս. Սահակայ Պարթեի հայրապետին մերոյ. — 11  
Ռ. Կիւրոսի եւ Յովհաննու վկայիցն.



Ն.

Լ.




### ՓԵՏՐՈՒԱՐ

(28 օր է, յորոց 4-ը կիրակի եւ 2-ը տօն.)

- |    |   |  |    |
|----|---|--|----|
| 13 | 1 | † Կիր. դկ. Գ, գկնի Ծննդեան. Հրց. դձ. „Փառաւորելով“ . Հմբ. բկ. „Զյարուքիւն“ <i>ցվերջն</i> . Բարեկենդան Առաջաւորաց պահոց. — Ռ. Տրիփոնի վկային. — Լտ. Եօթանասներորդաց կիրակի. | 12 |
|    |   | ☉ Արեգակն ելանէ ժ. 7, վ. 9.<br>— մտանէ ժ. 5, վ. 23.  |    |
| 14 | 2 | Բշ. աձ. Ա օր պհց. Առաջ. — Ռ. Տեառնընդառաջ. — Ծնունդ Վսեմափառ եւ Կայսերազն Սեծի Իշխանին Նիկոլայի Կոստանդինովիջ (յամին 1850.)  | 13 |
| 15 | 3 | Գշ. ալ. Բ օր պահոց Առաջաւորաց. — Ռ. Սիմեոնի ծերունւոյն եւ Աննայի մարգարեոհւոյն.  | 14 |
| 16 | 4 | Դշ. բձ. Գ օր պահոց Առաջաւորաց. — Ռ. Իսիդորայ եգիպտացւոյն.  | 15 |
|    |   | ☉ Լրումն լուսնի. — Պարզ եւ ցուրտ.  |    |
| 17 | 5 | Եշ. բկ. Դ օր պահոց Առաջ. — Ռ. Ագաթեայ կուսին.  | 16 |
| 18 | 6 | Ուր. գձ. Ե օր պահոց Առաջաւորաց. — Ռ. Վուկոհասայ եպիսկոպոսին Զմիռնիոյ.  | 17 |
| 19 | 7 | Շբ. գկ. Սարգսի զօրավարին, եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ 14 զինաւորացն. — Ռ. Ղուկասու ելլաղացւոյն.   | 18 |

Ն.

Լ.



- 20 8 † Կիր. դձ. Դ, գկնի Ծննդեան. Հրց. դկ. „Անսկիզբն քանդ“. Հմբ. բձ. „Սքանչելի“ եւ „Կանխելով“. Հարսանիք. — Ռ. Թեոդորոսի ստրատելատի վկային եւ Զաքարիայ մարգարէին. 19
- 21 9 Բշ. դկ. Ատովմանց գորավարաց. — Ռ. Նիկեփորայ վկ. 20
- 22 10 Գշ. աձ. Սուքիասեանց վկ. — Ռ. Ղարալամպոսի քհ. 21
- 23 11 Դշ. ալ. Պահք. — Ռ. Վլասայ վկային. 22

☉ Արեգակն ելանէ ժ. 6, վ. 51.

— մտանէ ժ. 5, վ. 37.

- 24 12 Եշ. բձ. Ոսկեանց քահանայից. — Ռ. Մելիտոսի եպիսկոպոսին. — Լտ. Մատաթիայ առաք.—Տոմ. Մեհեկան. 23

☾ Վերջին քառորդ լուսնի. — Բարեխառն.

- 25 13 Ուր. բկ. Պահք. — Ռ. Մարտինիանոսի կեսարացւոյն. 24

- 26 14 † Շբ. գձ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ, որ է տօն քառասնօրեայ Գալստեանն Գրիտոսի ի տաճարն. — Ռ. Օգսենտիոսի անապատականին. — Ագ. Նիրհան. 25

- 27 15 † Կիր. գկ. Հրց. դկ. „Որ լահեղակերպ“. Հարսանիք. — Ռ. Ոնեսիմեայ աշակ. Պօղոսի. 26

- 28 16 Բշ. դձ. Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիրողի եւ Բենիամինի սարկաւազացն, եւ սրբոց վկ. Աբղլմսեհի, Որմզղանայ եւ Սայենի. — Ռ. Պամփիւլեայ եւ Պորփիւրի վկայից. 27

- 1 17 Գշ. դկ. Ղեռնդեանց քահանայից. — Ռ. Թեոդորոսի Տիւռոնի գորավարին. — Լտ. ՄԱՐՏ. 28


- 2 18 Դշ. աձ. Պահք. — Ռ. Ղեռնի պապին.—Լտ Օր մոխրոց. 29

☉ Ծնունդ լուսնի. — Յուրտ եւ անձրեւ.

- 3 19 † Եշ. ալ. Ս. Վարդանանց գորավարացն մերոց 1036 վկայիցն. Յիշատակ մեռելոց. — Ռ. Արքիպպայ եւ Փիլիմոնի վկայից. — Տճ. Զիւլիհիճճէ. 1  
— Օր գահակալութեան Վեհափառ. ԻՆՖՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց (յամին 1855.)

Ն.

Լ.



- 4 20 Ուր. բձ. Պահք. — Ռ. Լեւոնի եպիսկոպոսին. 2
- 5 21 Շք. բկ. Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովոյն 150 հայ- 3  
րապետաց. — Ռ. Տիմոթեոսի վկային. — Տճ. Ճեմրեի  
նաշխտէ պեխաք. Օր իջանելոյ ջերմութեան արեւուն  
ի հող. — Հր. Վեաղար.
- ⊙ Արեգակն ելանէ ժ. 6, վ. 34.  
— մտանէ ժ. 5, վ. 50.
- 6 22 † Կիր. դկ. Բուն բարեկենդան. եւս Յ. եւ Ռ., որոց եւ 4  
յիշատակ դարձի նշխարաց եւզինեոսի վկային.
- 7 23 Բշ. աձ. Ա. օր մեծի պահոց. — Ռ. Պողիկարպոսի Զմիւռ- 5  
նիոյ հայրապետին.
- 8 24 Գշ. ալ. Բ օր մեծի պահոց. — Ռ: Գիւտ գլխոյ Յովհ. 6  
Կարապետին.
| 10 | 29 Գշ. գկ. Որդւոցն Որոտման՝ Յակոբայ առաքելոյն եւ Յովհաննոս աւետարանչին. Բարեկենդան Ծննդեան Գրիստոսի. — Ռ. Մանկանցն Բերդեհեմի.   | 19 |
| 11 | 30 Դշ. դձ. Ա. օր պահոց Ծննդեան. — Ռ. Անթիմոսի եւ Սամփսոնի վկայից.   | 20 |
| 12 | 31 Եշ. դկ. Բ. օր պից. Ծնն. — Մելանիայ հռովմայեցոյն.   | 21 |



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԻԱՌԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

- 1.** Մի դուռ, Այսինքն.— Թրուչուն մի կայ,  
Շորերը փուռ. Հագուստը փուռ.  
Ջուր չի խրմում, Ջուր չըխրմեր,  
Աչքերն ա մուռ: Աչքերն է մուռ:

- 2.** Մի խրնձոր կայ ման (1) ա գալիս,  
Երկու տափով (2) պար (3) ա գալիս,  
Մի մեծ ծակով կույ ա տալիս.  
Երկու ծակով լուս ա տալիս:

Այսինքն.— Խրնձոր մը կայ ման կուգայ,  
Երկու ծրնծղով պար կուգայ,  
Մի մեծ ծակով կույ կուտայ  
Երկու ծակով լոյս կուտայ:


- 3.** Այ (4) կրնգրդիկ (5), չ'ալ կրնգրդիկ,  
Քանի բեռնեմ, տար կրնգրդիկ:

Այսինքն.— Կարմիր կրնգրդիկ, ճերմակ (6) կրնգրդիկ.  
Քանի բեռնեմ տար կրնգրդիկ:

- 4.** Մի ծառ ունեմ հինգ ճիւղանի,  
Վերի ճիւղը հինգ ծրկանի.  
Վարի չորսը քսան ծրլանի,  
Ծիւերի ձերն ոսկրէ ծիւի,  
Ծիւին պսպղուն՝ ինչպէս հիւի:

Այսինքն.— Մի ծառ ունիմ՝ հինգ ճիւղ ունի.  
Վերի ճիւղը՝ հինգ ծակ ունի.  
Վարի չորսը՝ քսան ծիւ ունի.  
Ծիւերուն ծայրն կայ ոսկր—աձիւի,  
Աձիւն փայլուն, ինչպէս հայի:

(1) Ման գալ. պտըտիլ: (2) Ծնծղայ.— Ռու. КИМВАЛЪ, гремушка.—  
Տճ. գիլձարա: (3) Պար. պարել, կաքաւել: (4) Կարմրագոյն:  
(5) Կնգուղ — վեղար, որ ինչպէս յայտնի է ծայրը սուր է եւ մեջը  
փոս: (6) Զ'ալ — ճերմակ գունով կամ առանց ներկի:



Ա Մ Ս Ա Յ Ո Յ Յ

ԳԻԻՂԱԿԱՆՍՅ

## ՅՈՒՆՈՒՍ.Ր




**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Ժամանակ է երկրագործին կանուխ ցանելու. հունտերն ու սերմացուները գնել ու պատրաստել. եւ սաստիկ ցուրտերու ժամանակ գործիքները մաքրել ու սրել :

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Յունուարին մեղուները ուրիշ գեռնոց նման բմրած կամ քուն եղած կլինին. ուստի պէտք չէ փեթակներուն մօտ բարձր ձայներ հանել : Եթէ ցուրտին պատճառաւ հարկ լինի փեթակաց տեղը փոխադրել, լաւ է առաջուան տեղը թողուլ ու զանազան լաթերով ծածկել փեթակը, քան թէ փոխադրութեան պատճառաւ մեղուները զարթեցընել :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Ամսոյս մէջ հանդիպած խոնաւ ու ամպոտ եղանակներուն՝ այգեգործին պարտքն է թթենիի, բալի, ծիրանի, նուշի եւ ուրիշ ծառեր տնկելու տեղերը փորել ու փոսերը պատրաստել :

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Ամսոյս ցրտերուն պատճառաւ անասունները շատ կուտեն. ուստի լաւ է որ խոտին հետ խառն յարդ (*սարմալ*) տրուի նոցա : Ոչխարները՝ եթէ գետինը ծածկուած չէ ձիւնով, ցորեկները կարելի է արածելու թողուլ եւ երեկոները աղ տալ. իսկ նորածին գառները առաւօտեան ու երեկոյեան ծծած կաթէն զատ՝ պէտք է քիչ քիչ ամենալաւ խոտով կերակրել ու այնպէս սնուցանել :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Կովի կաթէն եղ հահել, եւ ամառուան սառոյցը պատրաստել պէտք է : Խոզերը զիրցընելու համար առաւօտները աղով խառն թեփ, կեսօրները եգիպտացորեն ու երեկոները խոտ տալու է :



ՓԵՏՐՈՒԱՐ



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Աշնան մեջ հերկած գետիններուն վերայ, եթէ օդը ներե, պետք է *արևաուշտքա* ցորենը, վարսակն ու գարին ցանել, եւ քիչ ժամանակէն յետոյ երկիրը տափանել որ դուրս մնացած սերմերը հողին մեջ թաղուին :

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Եթէ օդը տաք լինի՝ մեղուներն արեգակը ծագելուն պէս իրենք իրենց կելնեն փերակներէն եւ քիչ մը թռչրտելէն յետոյ նորէն տեղերնին կղառնան : Մեղուաց ելած ժամանակը՝ որքան կարելի է շուտով պետք է փերակը մաքրել որ աղտոտութենէ յառաջացող ցաւերէն անվնաս մնան :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Եթէ յունուարի մեջ սաստիկ ցուրտեր եղած լինին, ամսոյս մեջ պետք է նախընթացին յիշուած խրատները կատարել . այլ եւ ձիու, այծի կամ ոչխարի աղբ դիզել, որ վարելիք հողին հետը խառնելով զօրաւոր լինին բոյսերը :

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց զմը պետք է տաք պահել . ձիերու եւ եզներու կերակուրն ու աշխատանքը աւելցընել, եւ խոզերու տնակի փտտած խոտերը դուրս հանել որ խոճքօրները (խոզի ձագերը) անվնաս մնան : Ոչխարներուն երեկոները խոտ տալէն յառաջ՝ երբեմն պետք է աղ տալ . իսկ ջրելը առաւօտուն թողցընելու է : Ընդհանրապէս 1000 ոչխարին 40 ֆունթ աղ կտրուի . իսկ գառներուն կեսը :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Եթէ յունուարին սաստիկ ցուրտեր չպատահին, ամսոյս մեջ պետք է սառոյց ժողովել, եւ մարտի ցուրտերը մտածելով՝ փայտի եւ ածուխի համար հոգ տանել : Ուշադրութիւն անելու է նաեւ աշնան ժամանակէն ձմեռուան համար պատրաստուած սոխի եւ գետնախնձորի վերայ, որ սաստիկ ցուրտերէն չպաղին ու չփճանան :

Մ Ա Ր Տ



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Մարտի մեջ պետք է ցորեն, գարի, վարսակ, վուշ, եւս եւ կաղամբ, բանջար, մանանեխ եւ մեկոն ցանել: Ուշադրութիւն դարձրնելու է որ սերմանուած արտերուն մեջ անասունք չմտնեն:

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Մեղուներն ընդհանրապէս ամսոյս մեջ կսկսին ձագեր հանել, ուստի պետք է փեթակին դուռը բաց ձգելով ազատ բողուլ զիրենք:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Եթէ օդը տաք լինի, ժամանակ է ծառերը պատուաստ (*աշրամա*) անելու, ծառերուն տակի կարծրացած հողերը փորելու, այլ եւ խաղողի որթ կամ խաղողնիք տնկելու եւ արդէն տնկուածներուն տակերը փորելու: Ամսոյս մեջ կրտսնկեն ծիրանի, նուշի, դեղձի, սալորի, բուբի, բալի, կեռասի, խնձորի, տանձի եւ ուրիշ ծառերը:

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Մատակ ձիերուն վերայ մասնաւոր խնամք տանելու է. վասն զի նոքա ընդհանրապէս ամսոյս մեջ կձնեն իրենց քուռակները: Կովերն ու եզները արածելու դրկելու է. իսկ հորթերուն առատութենէն խոտ տալու է: Ոչխարներն արածեցընել պետք է, եւ կանուխ ծնած գառներուն փորհարինքէ ազատ պահելու համար՝ քիչ վարսակով խառն բեփ տալու է:

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Հաւերու եւ սագերու կուտը կանոնաւոր տալով՝ ջանալու է գատիկուան համար պետք եղած հաւկիթը ժողովել: Կովի կաթէն սեր, եղ ու մածուն հանել եւ կանխածին ոչխարաց կաթէն պանիր պատրաստել:

Ա. Պ Ի Ր Լ



ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Տաք երկիրներու մեջ ժամանակ է սեխ, ձմերուկ, կորեկ եգիպտացորեն, լոպի, գետնախրնձոր, ոսպն, սիսեռն, բողկ, եւ ուրիշ սոցա նման համեմունք եւ բանջարեղէնք ցանել. այլ եւ անցեալ մարտի մեջ վարսակ ու գարի սերմանած տեղերն եղած կունտ հողերը տափանով փշրել :

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ. — Ապրիլի մեջ քիչ անգամ կպատահի որ ցուրտի պատճառաւ մեղուները քաղցածութիւն կրեն. բայց պատահած ժամանակը պէտք է մաքուր մեղրով կերակրել զիրենք, եւ եթէ մեղր չգտնուի, շաքարի կտորներ ձգել փեթակին մեջ :

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Ամսոյս սկիզբները բոլոր այգին պէտք է փորել, եւ խաղողնիքին ցիցերը տնկել, որ երբեմն պատահած սաստիկ քամիներէն ճիւղերն անվնաս մնան :

ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ. — Գոմերն ու ախուռները պէտք է մաքրել ու հովոտել : Մատակ ձիերը իրենց քուռակներուն հետ ցորեկները դաշտի մեջ թողցընելու է որ կանաչ խոտ ուտեն. իսկ երեկոները քուռակին մօրը վարսակ տալու է : Ոչխարներն ըստ մեծի մասին ապրիլի մեջ կծնեն իրենց գառնուկները. ուստի պէտք է մաքիները (овца, եգ ոչխար) գեթ երեկոները՝ թեփով կերակրել, եւ շաքաթը մեկ անգամ աղ ուտեցընել : Գառները զոմերուն մերձակայքը պէտք է արածեցընել եւ զգոյշ կենալ որ անձրեւէ ու սաստիկ քամիէ չվնասուին :

ՏՆՏԱՍԱԿԵՆՔ. — Շտեմարանները հովոտելու եւ ըստ կարելւոյն մաքուր պահելու է : Կովի կաթէն երկու տեսակ եղ, այսինքն կոզի (կաթի եղ) եւ կարագ (սերի եղ) հանելու է :

Մ Ա Յ Ի Ս



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամենագեղեցիկ ամսոյն մեզ բոլոր բնութիւնը մեկ նոր կենդանութիւն ստանալով՝ երկրագործին պարտքն է իւր բոլոր վարուցանքին վերայ ամենայն ուշադրութեամբ հսկել, որ մեջը անասունք չըմտնեն ու չկոխկրուտեն :

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Ամսոյս մեջ մեղուարուծին պարտքն է հսկել որ իւր մեղուաց պարը ուրիշ մեղուաներու հետ չխառնուին կամ մի եւ նոյն ծաղկանց վերայ հիւթ ժողովելու ժամանակ պատերազմի չելնեն միմեանց դէմ, որ շատ անգամ մեծ կոտորած կանեն :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Մրգեղինաց ամեն մեկ ծառին վերայ նայելու է, եւ ուր որ թրթուրի (*բրբրբր*) բոժոժ գլտնուի, իսկոյն ոչընչացընելու է :

**ԱՆԱՍՆԱԴԱՐԾԱՆԱԿԱՆՔ.** — Տաք երկիրներու մեջ 15-էն վերջը կսկսուի ոչխարաց բուրդը խզելը . բայց ուր որ ծով կամ գետ կայ, խզելէն յառաջ լաւ ու օգտակար կլինի թէ որ 8 կամ 10 օր ամենայն երեկոյ լուացուին, որով թէ ոչխարները կզովանան եւ թէ նոցա բուրդը կմաքրուի : Զիերուն կանաչի հետ խառնած չոր խոտ տալու է, իսկ գոմէշները լիճերու մերձակայքն արածեցընել պետք է, որ տաքէն նեղացած ժամանակ՝ լճին մեջը պառկելով զովանան :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Ամսոյս մեջ եղած անձրեւի ժամանակ՝ տան պիտոյիցը համեմատ տակառ պետք է դնել դուրսը որ անձրեւով լցուի, եւ անցեալ տարւոյ գինիի լելը (մուրտը) խառնելով՝ արեւի տակ բողցընելու է մինչեւ որ կանոնաւոր քացախ լինի, եւ այնուհետեւ իսկոյն ներս առնելու է որ արեգական ազդեցութենէն սաստիկ կտրուկութեան հասնելով՝ քացախը մեկէն չթուլանայ :

## ՅՈՒՆԻՍ



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Պետք է հնձած խոտերը չորցրնելէն վերջը ժողովել ու մեկտեղ դիզել, եւ մեկմեկէ կապած երեք ձող (*սըրըզ*) ձգել վերան, որ քամիի ժամանակ խոտը չցրուի: Ժամանակ է գետնախնձորի արմատին վերայ հողակոյտ անելու:

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Մեղուաց պարքը ամսոյս մեջ կրազմանան. ուստի եւ մեղուարանը պետք է մոմագօծնոր փեթակներ ունենայ պատրաստած, որ որսալ կարողանայ եւ կամաց կամաց փեթակին մեջ ժողովէ գիրենք:

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այս ամիս գգուշութեամբ պետք է շրջել այգիներուն մեջ, որ նորարոյս ճիւղերն ու բողբօջները (*ֆիտակն*) չքափին: Առուակներու մեջ բուսած խոտերը պետք է մաքրել եւ ջրանցքները շտկել. այլ եւ նոր տնկած խաղողնիքին տակի խոտերը պոկել:

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց գոմերն ու ախոռները պետք է բաց ու մաքուր պահել որ ճանճերէ չնեղուին: Մարտի վերջերն ու ապրիլի սկիզբները ծնած ձիերը քիչ քիչ գործի դնելու է, եւ ոչխարները գով ժամանակները միայն արածեցընելու է. գիշերներն եւս իրենց գառնուկներուն հետ մեկտեղ անմշակ արտերու վերայ թողցընելու է:

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Յունիս ամսէն սկսելու է քիչ քիչ ձմեռուան փայտին տարեկան պատրաստութիւնը տեսնել. եւ տանիքներուն վնասուած ու արուած տեղերը շտկել:



## ՅՈՒԼԻՍ



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Կանուխ ցանուած ցորենը, վարսակն ու գարին պէտք է հնձել, հնձուածները կալին վերայ ծեծելով՝ յարդէն զատել, եւ շտեմարանը լեցրնելէն յետոյ՝ երբեմն երբեմն խառնելով քամիի տալ որ ոջիլէ անվնաս մնան :

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Տորեկուան ժամանակ փեթակները պէտք է բանալ ու մեղրը մոմէն զատել, բայց պէտք չէ փեթակը առանց մեղրի թողուլ, որ մեղուները խըրտին եւ ուրիշ տեղ երթան :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Խաղողնիքին ծռուած ճիւղերը պէտք է շտկել ու ցիցի վերայ կապել, եւ եթէ տկար ճիւղեր կան՝ կտրել, որ ուժովները առաւել եւս պտղաբեր լինին :

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Ամսոյս վերջերը հնձուած արտերու վերայ կարելի է արածեցրնել ոջիւարները, բայց ոչ առաւօտն ու կեսօրին, այլ միայն իրիկուան ժամանակէն մինչեւ մթըննալը : Այս եւս զիտնալու է որ այնուհետեւ իսկոյն պէտք չէ գիրենք ջրել, այլ անմշակ դաշտերու վերայ գիշերելէն յետոյ՝ առաւօտը կանուխ ջուր տալ :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Ամսոյս մեջ պէտք է ձիերու եւ ուրիշ անասնոց համար ձմեռուան խոտը գնել. կովերու եւ ոջիւարաց կաթէն պանիր ժողովել ու աղել, եւ զոմեշի կամ կովի կաթէն ձմեռուան չորաթանը պատրաստել. այլ եւ զանազան սալորաց չորցուցածները համբարել :

ՕԳՈՍՏՈՍ




ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Այն տեղերը՝ ուր ցորենը ամսոյս մեջ կհնձեն, պիտի ջանան որ որքան կարելի է շուտով ձեծեն եւ շտեմարան տանեն, որ անձրեւէ չվնասուի :

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ. — Ամսոյս մեջ մեղուաբոյժն իւր բոլոր ուշադրութիւնը պիտի դարձրնէ ճանձերու համար ձմեռուան պատրաստութիւն տեսնելու, եւս եւ վայրի ճանձերէն պաշտպանելու, որք ընդհանրապէս ամսոյս մեջ բազմութեամբ տկար ու որք մեղուներու վերայ կղիմեն եւ փեթակին մեջ կոտորած անելէն վերջը նոցա պաշարն եւս կուտեն :

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Եթէ ամառը ցրտային ու անձրեւոտ լինի, խաղողնիքին անելորդ տերեւները պոկելու է որ ողկոյցները ժամանակին եփեն ու հասուննան :

ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ. — Կովերը, ոչխարները, ձիուքուռակներուն ու խոզերը լուսը բացուելուն պէս ջրելու եւ արձակելու է որ մերձակայ դաշտերուն, անտառներուն ու լեռանց խորշերուն մեջ երթան արածեն եւ տաքէն ազատ մնան : Կրուող կովերուն երեկոները քիչ քիչ թեփտալու է որ առաւօտները շատ կաթ կան :

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Գինիին տակառները այժմէն իսկ պետք է լուանալ, չորցընել ու պատրաստել, որ մինչեւ այգեկութիւնը հին ըմպելեաց հոտը ըստ կարելւոյն մաքրուի :



## ՍԵՊՏԵՄԲԵՐ



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Ամսոյս մէջ պէտք է երկրորդ անգամ հնձած խոտը լաւ ջորցընելէն յետոյ դիզել, եւ ձմեռուան ցորենի, գարւոյ, վարսակի եւ հաճարի ցանքն անել :

**ՄԵՂՈՒԱՖՈՒԾԱԿԱՆՔ.** — Մայր ճանճին ու ամառուան ծնած մեղուներուն ուժին ու առողջութեանը համեմատ՝ ձմեռուան մեղրի պատրաստութիւնը տեսնելու է, եւ վայրենի մեղուաց յարձակմունքէն ու նոցա մեղրագողութենէն զգոյշ կենալու է :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Այգեկութն ընդհանրապէս ամսոյս մէջ կանեն. ուստի պէտք է զգուշանալ որ անձրեւը չսկսած խաղողները քաղուին, տեսակները զանազանուին եւ գինեհանութեան համար ժողովածները՝ նոյն օրուան մէջ կոխել տրուին :

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Սեպտեմբերի մէջ պէտք է գատել ձմեռը պահելու անասունները եւ մնացածը վաճառել : Ոչխարները հորթերն ու այծերը հնձուած արտերու մէջ արածեցընելու է ցորեկները եւ երեկոները աղ տալու է :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Չմեռուան համար պէտք եղած խոտը, վարսակը, գարին, յարդն ու կորեկը պատրաստելու է : Վառելիքն ու այրելիքը հոգալու է : Վարունգ, կաղամբ, սրբուկ (помадоръ, *ֆրէսկ փարլընանը*) եւ գոլեարն աղելու . այլ եւ գետնախնձոր, սոխ ու սխտոր համբարելու է :

## ՀՈԿՏԵՄԲԵՐ




**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Չմեռուան վարուցանքը թեև ամսոյս մեջ կվերջանայ, բայց քանի որ գետինը պաղած չէ՝ երկրագործութիւնը կարելի է շարունակել :

**ՄԵՂՈՒՄԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Ճեղք ունեցող փերակները մոմով պատելու եւ ամրցրնելու է, եւ մեռած ճանճերը փերակներէն դուրս հանելէն յետոյ ձմեռուան պաշարը, այսինքն ամէն մէկ փերակի մեջ 20-էն մինչեւ 30 ֆունք մեղր դնելու է, որ մինչեւ ապրիլի 15-ը կբաւէ, եթէ փերակին մեջի ճանճերուն թիւը 100-էն աւելի չէ :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Եթէ ամառը անձրեւային լինի եւ խաղողը ժամանակին չեվելուն համար այգեկուքը հոկտեմբերին մնայ, պետք է զգուշանայ որ խաղողները պարզ օդոյ եւ ցօղերը չորացած ժամանակը քաղուին :

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Կենդանեաց ձմեռուան պաշարը պատրաստելու է եւ կթուող կովերուն երեկոները տաք ջրով քիչ մի աղ խառնած թեփ տալու է :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Սոխն ու գետնախնձորը գետնի խոնաւութենէն ու սաստիկ ցուրտերէն անվնաս պահելու համար դրուած տեղերուն վարն ու վերը չոր խոտ փռելու է : Ամսոյս մեջ պետք է բնակարաններուն պատուհանները զոցել եւ ճեղքերը շաղախով (замаска) ծեփել կամ թուղթ փակցրնել. այլ եւ վառարաններուն ծխնելոյզները (труба) մաքրել, որ հրդեհ չպատահի :



## ՆՈՅՆՄԻՆԵՐ



**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Նոյեմբերի մեջ երկրագործին պարտքն է պարապ միջոցները գարնան ցանելիք հունտերը մաքրել եւ դաշտերէն ու անտառներէն ձմեռուան այրելիքը բերել :

**ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ.** — Այս ամսէն կսկսի մեղուաց ձմեռնային հանգստութիւնը, վասն զի նոյեմբերին կղաղրին աշխատանքէ. ուստի պէտք չէ փեթակներուն քովը բարձր ձայներով խօսել :

**ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ.** — Նորաբոյս եւ նորատունկ ծառերը հաստ ձողերու վերայ կապելու է, որ ձմեռուան քամիներէն չկտարուին :

**ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ.** — Անասնոց գոմերն ու ախուռները պէտք է մաքուր պահել, ոչխարներուն չորախառն կերակուր տալ, ու եթէ օդը ներէ՝ օրը քանի մի ժամ դուրս հանել որ մաքուր օդ առնուն : Ամորձատ (կռտած) խոզերը մորթել եւ ապխտել պէտք է. իսկ խոճքորները (խոզի ձագերը) եթէ հարկաւորութիւն չկայ պահելու՝ ողջ ողջ վաճառել :

**ՏՆՏԵՍԱԿԱՆՔ.** — Ձմեռուան համար պատրաստուած բոլոր փայտը սղոցել, կտտորել տալ ու բնակարանէն դուրս տեղ մը շարել տալու է որ անկից հրդեհ չպատահի : Շտեմարաններն ու ներքնատները պարզ ու բարեխառն օդոյ ժամանակ բաց ձգել ու հովոտել պէտք է :

ԴԵՎՏԵՄԲԵՐ



ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆՔ. — Ամսոյս մեջ երկրագործը դաշտերուն մեջ գործ ջունենալով՝ իրեն յարմար աշխատանքն է ամառուան հնձած խոտը վաճառել, մերձակայ անտառներէն փայտ կտրել ու վաճառելու հանել, եւ պարապ միջոցները իւր աշխատանաց արդիւնքը հանգստութեամբ վայելել :

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆՔ. — Մեղուները մկներուն ձեռքէն ազատելու համար՝ փեթակին դիմացը ականատ (*գաֆալինա*) լարելու է, որ մեղուները ջմեռցուցած՝ իրենք բռնուին :

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆՔ. — Այգեգործին եւս իբրեւ հանգրստեան ամիս, պատշաճաւոր ժամանակն է իւր աշխատանաց քաղցր արդիւնքը վայելելու :

ԱՆԱՍՆԱԴԱՐՄԱՆԱԿԱՆՔ. — Անասնոց վերայ մասնաւոր խնամք տանել պէտք է ամսոյս մեջ, եւ գոմերուն, ախոռներուն ու հասնոցներուն դռները փակ պահելու է որ չըմբսին : Ոչխարներուն կեցած տեղը պէտք է ջուր դնել, եւ եթէ ցուրտը սաստիկ է՝ ջուրը փոքր ինչ տաքցրնել :

ՏՆՏԵՍԱԿԱՆՔ. — Հաւերու եւ սագերու բնակարանը պէտք է տաք պահել : Սագերու ամենալաւ կերակուրը կհամարուի չժեժած ցորեն, վարսակ, գարի եւ սիսեռ : Զուրը որքան կարելի է շատ պէտք է տալ եւ մինչեւ մորթելը սագնոցէն դուրս չթողուլ : Եթէ գետը կամ լիճը պաղած ջրինի, շատ օգտակար է սագերը լողացընելէն վերջը մորթել :

## ԱՆՈՒԱՆՔ ՄՐԲՈՑ

*solenturque jēlykētyghu. Հայաստանեայց ըստ կարգի այբուբենից*

յամին 1870.

Աբգար Դեկտեմբերի 19.  
 Աբղիա Օգոստոսի 4.  
 Աբղյմսեն Փետրուարի 16.  
 Աբեղնագով (Միսայել) Յունիսի 30.  
 Աբել Յունիսի 30.  
 Աբիրաս Նոյեմբերի 12.  
 Աբիսողոմ Յունուարի 17.  
 Աբրահամ Յուլ. 30 եւ Դեկտ. 21.  
 Ագապի Օգոստոսի 6.  
 Ադամ Յունիսի 30.  
 Ադդե Դեկտեմբերի 14.  
 Ադոկտոս Սեպտեմբերի 26.  
 Ագարիա (Միսաք) Յունիսի 30.  
 Աքանագինե Յնս. 11. եւ Յուլ. 28.  
 Աքանաս Յունվ. 24, Օգոստ. 8 եւ  
 Հոկտեմբերի 24.  
 Ալեքսիանոս Դեկտեմբերի 7.  
 Ակակիոս Յունիսի 15.  
 Ակիւլինե Հոկտեմբերի 22.  
 Ակիւղաս Յունուարի 27.  
 Ակիփսիմաս Նոյեմբերի 3.  
 Ահարոն Յունիսի 30.  
 Ադեքսանդրոս Նոյեմբերի 5.  
 Ամբակոս Օգոստոսի 4.  
 Ամովսես Օգոստոսի 4.  
 Այիրայա Նոյեմբերի 3.  
 Անանիա Հոկտեմբերի 13.  
 Անաստաս Հոկտեմբերի 26.  
 Անատոլա Յունուարի 29.  
 Անգեոս Օգոստոսի 4.  
 Անդրեաս Նոյեմբերի 14.  
 Անդրիանոս Յունուարի 29.  
 Անդրոնիկոս Նոյեմբերի 24.  
 Անրիմոս Սեպտեմբերի 24.  
 Անիքսոս Յունիսի 29.

Աննա Մարտի 7 եւ Օգոստ. 25.  
 Անտոն Յունվ. 19 եւ Հոկտ. 12.  
 Անտոնինոս Յունիսի 29.  
 Աշխեն Յունիսի 4.  
 Ապիտոն Յունուարի 26.  
 Աստուածատուր Դեկտեմբերի 22.  
 Ատովմ Փետրուարի 9.  
 Արիստակես Օգոստոսի 1.  
 Արսեն Դեկտեմբերի 3.  
 Արտեմիս Հոկտեմբերի 22.

Բաբել Յունիսի 22 եւ Հոկտ. 27.  
 Բագարատ Նոյեմբերի 26.  
 Բագոս Յունիսի 18.  
 Բառնարաս Հոկտեմբերի 13.  
 Բասիլիդես Դեկտեմբերի 15.  
 Բասիլիսկոս Նոյեմբերի 10.  
 Բասոս Դեկտեմբերի 15.  
 Բարակ Յունիսի 30.  
 Բարադամ Սեպտեմբերի 24.  
 Բարթողոմէոս Նոյեմբերի 28.  
 Բարսեղ Յունվ. 3 եւ Հոկտ. 24.  
 Բենիամին Փետրուարի 16.  
 Բուրա Նոյեմբերի 9.

Պարրիել Նոյեմբերի 7.  
 Պայիանե Յունիսի 9.  
 Պեդեոն Յունիսի 30.  
 Պեննարիոս Նոյեմբերի 30.  
 Պեորգ Սեպտեմբերի 26.  
 Պղերիկոս Դեկտեմբերի 17.  
 Պոհարինե Օգոստոսի 31.  
 Պորդիոս Յունուարի 22.  
 Պուրիաս Նոյեմբերի 12.  
 Պրաբոս Դեկտեմբերի 8.

Գրիգոր Յունվ. 3 եւ 24, Մարտի 14 եւ 28, Յունս. 13 եւ 27, Հոկտեմբերի 10 եւ 24 եւ Դեկտ. 5.  
Գրիգորիոս Յունվ. 22, Օգոստ. 1 եւ Հոկտեմբերի 12.

Դամիանոս Դեկտեմբերի 21.  
Դանիէլ Յունիսի 30, Օգոստոսի 1 եւ Դեկտեմբերի 3.  
Դաւիթ Սեպտեմբերի 28, Հոկտեմբերի 10 եւ Դեկտեմբերի 24.  
Դեմետրիոս Նոյեմբերի 10.  
Դիոնեսիոս Հոկտեմբերի 15 եւ 24.  
Դոմնաս Դեկտեմբերի 17.

Եգեկիէլ Սեպտեմբերի 1.  
Եգր Սեպտեմբերի 1.  
Ելեւթիւրոս Յունուարի 29.  
Ելպիս Օգոստոսի 6.  
Եղիա Յունիսի 7.  
Եղիազար Յուն. 30 եւ Օգոստ. 3.  
Եղիշէ Հոկտեմբերի 10.  
Եղիսէ Յունիսի 9.  
Ենովս Յունիսի 30.  
Ենովք Յունիսի 30.  
Եպիփան Յունիսի 22 եւ Հոկտ. 24.  
Երանոս Սեպտ. 24 եւ Հոկտ. 5.  
Երեմիա Օգոստոսի 27.  
Երմոզինէս Դեկտեմբերի 7.  
Երմոզիոս Հոկտեմբերի 8.  
Երմոնէ Սեպտեմբերի 29.  
Եւազր Դեկտեմբերի 3.  
Եւզինէոս Յունվ. 27 եւ Դեկտ. 10.  
Եւզինէ Յունուարի 26.  
Եւզրաբոս Դեկտեմբերի 7.  
Եւդոկսիոս Հոկտեմբերի 20.  
Եւպրաքսէ Հոկտեմբերի 8.  
Եւսեբիոս Դեկտեմբերի 15.  
Եւստաքէոս Սեպտեմբերի 29.  
Եւստրատիոս Դեկտեմբերի 10.  
Եւտիքոս Դեկտեմբերի 15.  
Եւփիմէ Յունիսի 27.  
Եփրեմ Յունվ. 3 եւ Հոկտ. 24.

Զաքարիա Յունիսի 7 Օգոստ. 4 եւ Սեպտեմբերի 1.

Զենոն Հոկտեմբերի 20.

Թադէոս Յուն. 25 եւ Նոյեմ. 28.  
Թաթուլ Հոկտեմբերի 12.  
Թալիլէոս Յունիսի 25.  
Թեկղ Հոկտեմբերի 6.  
Թեոդիտոն Յնս. 25 եւ Հոկտ. 20.  
Թեոդոս Յունուարի 20.  
Թեոդորոս Յնվ. 29 եւ Փետր. 28.  
Թեոպիստէ Սեպտեմբերի 29.  
Թեոպոմպոս Դեկտեմբերի 15.  
Թեովնաս Դեկտեմբերի 15.  
Թեովիլոս Յունիսի 29.  
Թովմաս Օգոստոսի 29.  
Թունմաս Հոկտեմբերի 12.

Իգնատիոս Դեկտեմբերի 14.  
Ինզոս Դեկտեմբերի 17.  
Իսահակ Յունիսի 30.  
Իրաւափառ Դեկտեմբերի 1.

Խաղ Յունիսի 20.  
Խոսրովիդուխտ Յունիսի 4.  
Խորէն Դեկտեմբերի 21.

Մամիւնդոս Օգոստոսի 31.

Կալիստիկէ Հոկտեմբերի 22.  
Կալիստրատոս Յունիսի 6.  
Կանդիտոս Յունուարի 27.  
Կատարինէ (Նեքտառինէ) Սեպ. 29.  
Կիպրիանոս Յունիսի 27.  
Կիրակոս Յունուարի 22.  
Կիւրեղ Յունուարի 24, Փետր. 16, Մարտի 7, Օգոստոսի 8 եւ Հոկտեմբերի 24.

Կղեմէս Նոյեմբերի 26.  
Կղոզիա Յունուարի 26.  
Կոստատիոս Յունիսի 15.  
Կոզմաս Դեկտեմբերի 21.  
Կոստանդիանոս Յունիսի 23.  
Կուռնելիոս Դեկտեմբերի 8.  
Կրօնիդէս Հոկտեմբերի 12.

Համազասպ Հոկտեմբերի 1.  
Հայրապետք Փետր. 21 եւ Սեպ. 5.  
Հեղինէ Յունիսի 23.

Հիւսիքոս Նոյեմբերի 12.  
 Հռիփսիմէ Յունիսի 8.  
 Ղազարոս Ապր. 4 եւ Հոկտ. 19.  
 Ղամբեոս եւ Ղամբեոսի Սեպ. 28.  
 Ղեռնդ Փետրուարի 17.  
 Ղուկաս Հոկտեմբերի 17.  
 Ղունկիանոս Յուլիսի 6, Հոկտեմբերի 19 եւ Նոյեմբերի 24.  
 Մակարիոս Յունվ. 27 եւ Դեկտ. 3.  
 Մակար Հոկտ. 20 եւ Դեկտ. 3.  
 Մաղաքիա Օգոստ. 4.  
 Մամաս Սեպտեմբերի 21.  
 Մանէ Յունիսի 16.  
 Մանուկ Նոյեմբերի 12.  
 Մատաթի Հոկտեմբերի 15.  
 Մատթեոս Հսկտեմբերի 17.  
 Մարդարիոս Դեկտեմբերի 10.  
 Մարթա Հոկտեմբերի 19.  
 Մարիամ Հոկտեմբերի 19.  
 Մարիանէ Սեպտեմբերի 22.  
 Մարկիանոս Նոյեմբերի 5.  
 Մարկոս Փետր. 16 եւ Հոկտ. 17.  
 Մարուգէ Դեկտեմբերի 12.  
 Մարուքայ Դեկտեմբերի 14.  
 Մարտիրոս Փետրուարի 7.  
 Մարտիրոն Նոյեմբերի 5.  
 Մելիտոս Նոյեմ. 9 եւ Դեկտ. 12.  
 Մելքիսեդեկ Յուլիսի 30.  
 Մեսրոպ Յուլ. 2 եւ Հոկտ. 10.  
 Մետրոփանոս Նոյեմբերի 5.  
 Մերկեռիոս Նոյեմբերի 30.  
 Մինաս Նոյեմ. 9 եւ Դեկտ. 7.  
 Միսաք (Ազարիա) Յունիսի 30.  
 Միւռոն Դեկտեմբերի 5.  
 Միքայել Նոյեմբերի 7.  
 Միքիա Օգոստոսի 4.  
 Մովկիմոս Յունիսի 15.  
 Մովսէս Յուլ. 30 եւ Հոկտ. 10.  
 Յակոբ Յուլիսի 30, Օգոստոսի 29,  
 Դեկտեմբերի 12, 24 եւ 29.  
 Յակովիկ Դեկտեմբերի 1.  
 Յեսու Յուլիսի 30.  
 Յեփթայէ Յուլիսի 30.

Յոբ Սեպտեմբերի 3.  
 Յովակիմ Օգոստոսի 25.  
 Յովել Օգոստոսի 4.  
 Յովհաննէս Յունուարի 15, Մարտի 14, Յունիսի 11, Հոկտեմբ. 13, 17, 24 եւ 29, Դեկտ. 3, 7 եւ 29.  
 Յովնան Օգոստոսի 4.  
 Յովսէփ Յունիսի 18, Յուլիսի 30, Հոկտեմբերի 19 եւ Նոյեմբերի 3.  
 Յուլիանէ Նոյեմբերի 23.  
 Յուդիտա Յունուարի 22.  
 Յուսիկ Օգոստոսի 1.  
 Յուստիանէ Յուլիսի 27.  
 Յուքեոս Հոկտեմբերի 24.  
 Կառոմ Օգոստոսի 4.  
 Կեղոս Դեկտեմբերի 3.  
 Կերսէս Յնս. 20 եւ Հոկտ. 10.  
 Կեքտառինէ (Կատարինէ) Սեպտեմբերի 29.  
 Կիլոդայոս Դեկտեմբերի 5.  
 Կոյ Յուլիսի 30.  
 Կունէ Յունիսի 16.  
 Դամոնէ Օգոստոսի 3.  
 Դիդա Հոկտեմբերի 1.3  
 Դինու Նոյեմբերի 9.  
 Դմառոն Օգոստ. 29 եւ Դեկտ. 8.  
 Դողակաթ Օգոստոսի 15.  
 Դուշան Սեպտեմբերի 22.  
 Ընեսիմոս Նոյեմբերի 24.  
 Ընոփրիոս Յունուարի 19.  
 Ըսկի (Ըսկեանք) Փետրուարի 12.  
 Ըվսէէ Օգոստոսի 4.  
 Ըվրեստէս Դեկտեմբերի 10.  
 Ըրմզղան Փետրուարի 16.  
 Պանդայեոն Հոկտեմբերի 8.  
 Պարսամ Յունուարի 19.  
 Պեղազիա Հոկտեմբերի 6.  
 Պետրոս Յունվ. 17 եւ Դեկտ. 28.  
 Պիմեն Դեկտեմբերի 3.  
 Պիոն Փետրուարի 16.  
 Պիստոս կամ Պիստիս Օգոստ. 6.  
 Պղատոն Նոյեմբերի 3.

Պողիկարպոս Դեկտեմբերի 8.  
 Պողիկտոս Յունուարի 22.  
 Պրոքոս Նոյեմբերի 24.  
 Պող Դեկտեմբերի 4.  
 Պողոս Յուլիսի 11, Նոյեմբերի 5,  
 Դեկտեմբերի 3 եւ 28.

Ռամելաս Հոկտեմբերի 20.  
 Ռատիկոս Օգոստոսի 31.  
 Ռոմանոս Սեպտ. 26 եւ Նոյեմ. 12.

Սահակ Յունվ. 31, Յունիսի 18,  
 Յուլիսի 2 եւ Հոկտեմբերի 1.

Սամուէլ Յուլիսի 30.  
 Սամոնաս Նոյեմբերի 12.  
 Սամփսոն Յուլիսի 30.  
 Սայէն Փետրուարի 16.  
 Սանդուխտ Յուլիսի 25.  
 Սարգիս Փետր. 7, եւ Յնս. 18.  
 Սեդրաք (Անանիա) Յունիսի 30.  
 Սեթ Յուլիսի 30.  
 Սեդրեստրոս Յունվ. 3 եւ Հոկտ. 24.  
 Սերգիոս կամ Սերգի Յունվ. 26.  
 Սեւեռիանոս Հոկտեմբերի 27.  
 Սիդուանոս Հոկտեմբերի 13.  
 Սիմէոն Սեպտեմբերի 21.  
 Սիսիանոս Դեկտեմբերի 3.  
 Սուքիաս Փետրուարի 10.  
 Սովիա Օգոստոսի 6.  
 Սովոնիաս Օգոստոսի 4.

Ստեփանոս Օգոստոսի 31, Նոյեմ-  
 բերի 2 եւ Դեկտեմբերի 26.  
 Սրապիոն Դեկտեմբերի 3.

Վահան Յունուարի 26.  
 Վաղերիոս Յունուարի 27.  
 Վառվառէ Հոկտեմբերի 6.  
 Վասիլուհի Նոյեմբերի 23.  
 Վարդան Փետրուարի 19.  
 Վարոս Հոկտեմբերի 12 եւ 26.  
 Վլասիոս կամ Վլաս Յունվ. 17.  
 Վրթանէս Օգոստոսի 1.

Տարագոս Նոյեմբերի 24.  
 Տիմոթէոս Հոկտեմբերի 15.  
 Տիտոս Հոկտեմբերի 15.  
 Տիւքիկոս Օգոստոսի 31.  
 Տրդատ Յուլիսի 4.  
 Տրիփոն Յունուարի 19.

Փերրոնէ Սեպտեմբերի 22.  
 Փիլիպտիմոն Սեպտեմբերի 21.  
 Փիլիպպոս Յունվ. 26, Հոկտեմ. 13  
 եւ Նոյեմբերի 14.  
 Փոկաս Հոկտեմբերի 5.  
 Փոտինոս Յունիսի 29.

Քրիստափոր Հոկտեմբերի 22.  
 Քրիստինէ Յուլիսի 27.

Օգսենտիոս Դեկտեմբերի 10.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Այս տօներէն զատ՝ քանի մի անուններ կան որ ի վաղուց հետէ սովորութիւն եղած է եկեղեցական հանդիսաւոր տօներուն հետ ի միասին տօնել. զոր օրինակ *Յարութիւն* — որ ընդհանրապէս Ջատկի ջորրորդ կիրակէի օրը կ'տօնեն. *Համբարձում* — Համբարձման տօնին, *Գարուստ* — Գալստեան օրը, *Վարդերես* — Պայծառակերպութեան կամ Վարդավառի տօնին, *Խաչատուր* կամ *Խաչերես* — Ս. Խաչի օրը, եւ այլն :

# ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԱՎԱՃԱՌԻ Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ՌՈՒՍԻԱ.

## ՅՈՒՆՈՒԱՐ.

- յԱտակի (Բեսարաբիոյ մէջ) 5-ին.
- Ի Նօթին, 6-ին.
- Խարկով, 6-էն մինչեւ 26 յունուարի.
- Բերդիչեւ, 13-ին.
- Կիեւ, 15-էն յունվ. մինչեւ 91 փետր.
- Բերեզովկա (գաւառ Անանեւի) երկու շաբաթը մի անգամ.

## ՓԵՏՐՈՒԱՐ.

- Ի Բեւրեղ եւ յՕլգոպոլ, 2-ին փետրուարի.
- յԱղեքսանդր. եւ ի Նովոմոսկովսկ, 5-11.
- Ի Նովոգէորգեւսկ եւ ի Բախմոլթ, 12-18.
- Պաւլոգրադ, 19-25.
- Կախովկա, 20.

## Մ Ա Ր Տ.

- Ի Բոբրինեց, 4-ին Մարտի.
- յԵլիսաւեոգրադ, ի Նովոգէորգեւսկ, յԵկատերինոսլաւ, յՈրեխով, եւ ի Բեւրեզովկա (գաւառ Աղեք) 4-10.
- Ի Տիրասպոլ, 10-ին.
- Նովոմիրգորոդ, ի Լիխովկա եւ ի Պաւլովսկ, 11-17.
- Սեդնեւկա (գառ. Ռոստովի) ԲՉ. 24-ին
- Բերդեանսկ, ի Բեւրեղ եւ ի Գենիչեւսկ, ԳՉ. 25-ին.

## Ա Պ Ր Ի Լ

- Ի Նովոմոսկովսկ եւ ի Մեւլիտոպոլ, 1-6.
- Պետրոպոլսկովսկ, 2-ին.
- Նօթին, յԱնանեւ, յԵլիսաւեոգրադ, յԵկատերինոսլաւ, յԱղեքսանդրովսկ, ի Իրագոսի (գաւառ Մեւլիտոպոլի), ի Մայորսկիյ (գառ Աղեքսանդր) եւ ի Ռեաթսկիյ (գառ. Ռոստովի) 23-ին.
- Բերեզովկա, ամեն երկուշաբթի.

## Մ Ա Յ Ի Ս.

- Ի Բերիսլաւ եւ յԱլեշկի, ԵՉ. Մյսի. 1-ին.
- Ի Տիրասպոլ, ի Նովոմիրգորոդ, ի Վոզնեսենսկ, ի Պաւլոգրադ, ի Ռոստով, ի Թայդան, ի Բեւրեղ, ի Պոլտաւա, ի Կախովկա, ի Նիկոպոլ, ի Սեդնեւկա, յԵասինովատիյ եւ ի Մեծ Թոկմակ, Ուր. 9-ին
- Ի Քերսոն, ի Բերիսլաւ եւ ի Նօթին, ԲՉ. 19-ին
- Բախմոլտ, ԳՉ. 21-ին.
- Բալտա, Շբ. 24-ին.

## Յ Ո Ւ Ն Ի Ս.

- Ի Խարկով, 1-15.
- Նոդոյսկ եւ ի Բեւրեղ ԳՉ. 24-ին.
- Բալտա, 25-30.
- Բախմոլտ, յԱղեքսանդրիա, յԵլիսաւեոգրադ, յԵկատերինոսլաւ, ի Նո-

վոգէորգեւսկ, յԱղեքսանդրովսկ, ի Մեւլիտոպոլ, ի Պաւլովսկ եւ ի Նովո-իվանովկա, Կիր. 29-ին:

## Յ Ո Ւ Լ Ի Ս.

- Ի Պոլտաւա, 10-31.
- Նիժնիյ Նովգորոդ (Համաշխարհական տօնավաճառ) 15-էն յուլիսի մինչեւ 925 օգոստոսի.
- Բեւրեղ, ի Միխայլովկա, ի Չապլինկա եւ ի Սլաւեանսկ, 20-ին:

## ՕԳՈՍՏՈՍ.

- Ի Վոզնեսենսկ, 1-ին.
- Նովոգէորգեւսկ, 1-9.
- Նովոմոսկովսկ, 1-9.
- Խարկով, 1-27.
- Նիկոպոլ, 15-ին.
- Թայդան, 26-ին:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ.

- յԵլիսաւեոգրադ, ԲՉ. 1-ին.
- յԱնանեւ, ի Նովոմիրգորոդ, ի Բախմոլտ, ի Ռոստով եւ ի Պետրիկովկա, ԲՉ. 8-ին
- յՕդեսսա, 14-30.
- Ի Խարկով, 23-30.
- Ի Բերիսլաւ, 26-ին.
- յԵկատերինոսլաւ, 26-ին.
- Ի Պաւլոգրադ, 29-ին.

## ՀՈԿՏԵՄԲԵՐ.

- Ի Տիրասպոլ, ի Վոզնեսենսկ, յԱղեքսանդրովսկ, ի Կախովկա, ի Սեդնեւկա, յԵասինովատիյ, ի Կադաւնիկա եւ ի Պոկրովսկ 1-ին.
- Խարկով, 1-15.
- Նոդաւսկ եւ ի Լիխովկա 14-ին.
- յԱնգրէեւկա, 22-ին.
- Ի Նովոմիրգորոդ, ի Բեւրեղ, ի Նօթին եւ ի Նիկոպոլ, 26-ին
- Քիշնեւ Հոկտ. 26-էն մինչեւ նոյեմ. 26.

## ՆՈՅԵՄԲԵՐ.

- Ի Բրատսկիւբովկա, 1-ին.
- Օրեխով, 8-ին.
- Նովոգէորգեւսկ եւ ի Բեւրեղ, 21-ին.
- Սլաւեանոսերբսկ, 24-ին.
- Ռոմանովկա (գաւառ Եկատերինոսլաւի), 30-ին.
- Բերեզովկա, ամեն երկուշաբթի.

## ԴԵԿՏԵՄԲԵՐ.

- Ի Նովոգէորգեւսկ, յԱղեքսանդրիա, ի Նօթին եւ ի Թոկմակ, 6-ին.
- Բեւրեղ, 20-ին.
- Խարկով, 20-էն մինչեւ 6 յունուարի:

## ՕՂԵՐԵՒՈՒԹԱԽՍՍՈՒԹԻՒՆ

ՕՂԵՐԵՒՈՒԹԱԽՍՍՈՒԹԻՒՆ կամ ըստ Յունաց *μετεωρολογία* (*մետեորոլոգիա*) կասուի ուսումնական գիտութեանց այն գլխաւոր ճիւղին բացատրութիւնը, որով երկրէս վեր ու լուսնէն վար՝ օդուն կամ մթնոլորտին մէջ եղած զանազան երեւոյթներուն ինչ եղածը կիմացուի :

Օդային երեւոյթները գլխաւորապէս երկու մասն կբաժանուին, այսինքն *ջրեղէն* եւ *հրեղէն* : Ջրեղէն մասունքը կբաղկանան *գորդիներէն*, այսինքն այն թեթեւ ու նուրբ շոգիներէն, որ այլ եւ այլ ջրերու երեսէն տաքութեան ուժովը աներեւոյթ կերպով վեր կբարձրանան, օդոյ մէջ կլողան, եւ յետոյ միանալով ու խտանալով՝ տարւոյն եղանակին համեմատ ցօղ, անձրեւ, ձիւն ու կարկուտ կդառնան ու երկրիս վերայ կթափին . իսկ հրեղէն մասունքը՝ ըստ մեծի մասին հողէն ու երկրիս տակի ծծմբային ու բորակային նիւթերէն կեննեն, եւ մեր լեզուովը *արտաշնչուքիւն* կասուին, յորոց կայծակն ու ասուպ կամ թռիչ աստղերը կյառաջանան :

Օդ. — Օդը մէկ շարժուն ու ամենաթեթեւ նիւթ է, անտեսանելի, անգոյն եւ անհոտ : — Այս թափանցիկ մարմինը երկրագնտիս ջորս կողմը տարածուած լինելով՝ եւ բոլոր արարածները անդադար իրենց մարմնոյ մէջ ընդունելով եւ արտաշնչելով, նախնիք ի սկզբանէ հետէ պարզ տարր (զգալի բաներու նիւթ) համարեցին . բայց արդի քիմիագէտները օդը լուծելով՝ ստուգեցին եւ տեսան որ օդոյ 79-րդ մասը բորակածին է, որ *գազ* կամ *ագոտ* կասուի, եւ 21-րդ մասը—*թթուածին*, այսինքն մաքուր օդ . նոյնպէս եւ օդաչափութեամբ իմացուեցաւ որ օդը 850 անգամ թեթեւ է քան զջուրը :

Օդը շատ տեսակ յատկութիւններ ունի, որոց գլխաւորները սօքա են .

Ցուրտ ժամանակները կխտանայ եւ տաքերուն կընդարձակուի,

Արեւը ելնելուն պէս՝ պայծառ, տաք ու թեթեւ կլինի, եւ արեւը մտնելու ժամանակ՝ մթին, ցուրտ ու ծանր .

Անձրեւի ժամանակ խոնաւութիւն կստանայ, որով բաց օդոյ մէջ գտնուող վատառողջ մարդկանց թոքացաւութիւն կպատճառէ :

Օդն է պատճառ նաեւ շնչառութեան, տաքութեան, լոյս հաղորդելու եւ ձայն տարածելու :

Օդը երեք կարգ կբաժանուի . — վերին , միջին եւ ստորին . եւ այս երեքը մէկտեղ *մթնոլորտ* կամ *սահման օդոյ* կկոչուի : Ստորին սահմանը՝ երկրիս երեսն է , ուր մեք կբնակիմք , ուսկից վեր գնալով՝ հետզհետէ կթեթեանայ օդը , այնպէս՝ որ եթէ մէկը 70 մղոնի ջափ վեր բարձրանայ , օդը միլիոն անգամ աւելի թեթեւ կգըտնէ երկրիս վերայի օդէն :

Երկրիս վերայի օդը որչափ թանձր լինի , այնքան վնասակար է կենաց . վասն զի , ինչպէս վերն ասացինք , նորա 21-րդ մասը միայն է առողջարար . իսկ 79-րդ մասը , որ է թանձր օդ , — վնասակար է : Եւ եթէ մէկն ուզէ փորձով իմանալ այս ճշմարտութիւնս , կարող է կոնքի (*շէշէնի*) մէջ գլխիվար աման մի դնել . յետոյ երեք աշտանակ դնել կոնքին մէջ՝ վառ ճրագներով , այնպէս՝ որ երրորդը երկրորդէն եւ երկրորդը առաջինէն բարձր լինին , եւ յետոյ կոնքին կէսէն ջուր լեցընել : Այն վառ ճրագներն այնքան կվառին , մինչեւ որ առողջարար օդը կցընդի կհատնի . եւ ապա նախ՝ կսկսի հանգչիլ բարձր ճրագը , յետոյ երկրորդը եւ յետոյ կարճագոյնը , եւ այն ժամանակը կոնքի ջրոյն 21-րդ մասը գլխիվար դրած ամանն իւր տակը կգրաւէ , եւ մնացեալ 79-րդ մասը՝ ամանէն դուրս՝ կոնքին մէջը կմնայ : Ասկէց կիմացուի թէ մարդուս համար յարմար օդը թթուածինն է , ի հարկէ թանձր օդով խառն . իսկ վնասակար թանձր օդը բուսոց աճելուն շատ յարմար է . ուստի եւ պարտէզներու օդը առողջարար է քան անտառներունը , որոց մէջ քիչ կներգործէ արեւը , ինչպէս որ պարտէզներու օդէն եւս առողջարար է ծովային օդը . վասն զի թէ բարեխառն է եւ թէ յարաշարժ :

ՔԱՄԻ . — Ի սկզբան այնպէս կկարծէին որ քամիները երկրիս տակի արտաշնչութենէն կյառաջանան եւ քանի մի ստորերկրեայ ձորերէն ու քարանձաւներէն կը փչեն . ուստի եւ դիցաբանութեան մէջ Իպպոտեայ որդին էօլ կամ Եռողոսը , որ Իտալիոյ եւ Սիկիլիոյ մէջ եղած եօթը Եռողեան կղզիներուն վերայ կթագաւորէր , քամիներու իշխող համարուեցաւ . եւ այն եօթը կղզիները՝ *գաւառ* կամ *հայրենիք հողմոց* կոչուեցան : Կպատմեն նաեւ որ Եռողոսը մէկ ահագին քարանձաւի մէջ արգիլուած կպահէր քամիները , եւ ուզեցած ժամանակը կարծակէր այս եւ այն տեղւոյն վերայ : Սա իբր թէ մէկ օր այն քարանձաւին դուռը գոցելը մոռանալով՝ քամիները դուրս վազեցին ու այնպիսի սաստկութեամբ մրրիկ հանեցին ծովու վերայ , որ այն սոսկալի ալեկոծութենէն Սիկիլիան Իտալիայէն բաժնուեցաւ : Բայց այս եւ սոցա նման առասպելեաց առաջին հերքողն եղաւ , իւր ելեքտրական գիւտերովն անուանի *Բենիաւիկե Տրուսկիլիե* , որ ,, Գամին , ասաց , ուրիշ բան չէ , բայց եթէ օդի հոսանք , այսինքն օդոյ տաքութեան աստիճանի փոփոխութիւններէն յառաջացող՝ մէկ տեղէն մինչեւ ի միւսը վազող հողմ , որ մէկ

որ եւ իցէ տեղւոյ վերայ սաստկութեամբ ուղղուած ժամանակը՝ ահագին ուժով օդը կպատուէ կանցնի, ու մէկ ժամուան մէջ մինչեւ 45 անգղիական մղոն տեղ կերթայ՝ :

Արդի բնապատումներուն ասելովը՝ հողմաչափով (anémomètre) հաշիւ եղած է որ արեւմտեան թեթեւ քամին (ըստ բանաստեղծից՝ զեփիւռ) մէկ վայրկենի մէջ կէս գաղղիական մեթր կամ  $11\frac{1}{4}$  Ռուսաց վերշոկ երկայնութեամբ տեղ կփչէ. միջակ քամին 2 մեթր կամ 45 վերշոկ. պաղ քամին 10 մեթր կամ գրեթէ 4 ձողաչափ (սաժէն) եւ 2 կանգուն (արշին). սաստիկ քամին 20 մեթր կամ գրեթէ 9 ձողաչափ եւ 1 կանգուն. փոթորիկը 25—30 մեթր կամ մինչեւ 14 ձողաչափ եւ մրրիկը 35—45 մեթր կամ գրեթէ 21 ձողաչափ արագութեամբ կփչէ : Իսկ օդի հոսանաց պատճառը արեգական ջերմութիւնն է. վասն զի երբ արեւու ջերմութենէն այլեւայլ տեղերու շոգիները թեթեւնան, օդն իւր հաւասարակշռութիւնը կկորուսանէ. ուստի եւ տեղէ տեղ շարժելով՝ հետզհետէ կսաստկանայ եւ քամի կպատճառէ : — Օրինակ, երբ արեգակը այրեցած գօտւոյն (1) վերայ լինի, արեւելքի մէջ ստորին օդը կթեթեւնայ. եւ երբ դէպի արեւմուտք դառնայ, արեւելեան օդը իւր առաջուան տեղը դառնալով՝ արեւելեան քամին կպատճառէ :

Քամիները գլխաւորապէս չորս կբաժանուին. այսինքն հիւսիսային, հարաւային, արեւելեան եւ արեւմտեան, որ ինչպէս յայտնի է, իւրեանց անունը աշխարհիս չորս գլխաւոր կողմերէն առած են. ուստի եւ հիւսիսային քամին ամենէն ցուրտն է, վասն զի հիւսիսային բեւեռէն կամ ցրտային գօտիներուն տակէն կսկսի փչել. հարաւայինը միջակ, եւ ամառ ժամանակը ամենէն տաք, վասն զի այրեցեալ գօտիներուն տակէն, կամ թէ աշխարհիս այն կողմէն կփչէ, ուր ծովերը սակաւթիւ են. եւ արեւմտեանը՝ ամենէն խոնաւ, որ շատ անգամ փչած ժամանակը անձրեւ կբերէ հետը. վասն զի Արեւմտեան Ովկիանոսէն կամ Ատլանտեան ծովէն կփչէ, յորմէ շատ ջրային գոլորշիք կբարձրանան :

Բաց յայսցանէ ուրիշ միջանկեալ չորս քամիներ եւս կան մէկմէկէ հաւասար հեռաւորութեամբ, որ կողմնական հողմուռք կասուին. այսինքն առաջինը Հիւսիսային-արեւելք, որ հիւսիսի եւ արեւելքի մէջտեղը կընկնի. երկրորդը՝ Հիւսիսային-արեւմուտք, — հիւսիսի եւ արեւմտեան մէջտեղը. երրորդը՝ Հարաւային-արեւելք, — հարաւուոյ եւ արեւելեան մէջտեղը. եւ չորրորդը՝ Հարաւային-արեւմուտք, — հարաւուոյ եւ արեւմտեան մէջտեղը : — Նաւուղղութեան մէջ կհաշուին նաեւ

(1) Երկբազմտիս մէջ ըստ աշխարհագրաց հինգ գօտիք կան, յորոց առաջինը այրեցեալ գօտի կասուի : Սորա տակն եղած երկու արեւադարձից մէջտեղի երկրորդն ուրիշ անունով տաք է, որ ամենեւին ձմեռ ջրիներ այն տեղ :

որիչ ութ հողմունք, որ կիսահողմք կասուին, եւ իւրեանց անունը միջանկեալ կողմնական քամիներէն կառնուն. այլ եւ 16 հողմագիծք կհամարուին, որ քառորդք հողմաց կասուին, եւ բոլորը մէկտեղ 32 կհաշուին:

Քամիները շատ բանի օգտակար են, այսինքն նախ՝ օդոյն տաքութիւնը զուգակշիռ կամ միակերպ պահելու եւ օդը մաքրելու համար, երկրորդ՝ այլ եւ այլ երկիրներու վերայ ամպեր ու անձրեւներ քշելու եւ նոցա հողերը ոռոգելու համար, երրորդ՝ ծաղիկներուն ծուծերը կամ հունտերը տեղէ տեղ տանելու եւ բնական կերպով հեռաւոր տեղեր սերմանելու համար, չորրորդ՝ ծովերուն վերայ նաւեր քալցընելու, եւ քամիի ջաղացքներուն թեւերը պտըտցընելու համար, եւ այլն:

ՓՈԹՈՐԻԿ. — Քամիները երբ սաստիկ փչելու ժամանակ թանձր ամպերու հանդիպին, ուղղակի փչել չեն կարողանար. ուստի եւ մէկ ուրիշ անցքով դէպ ի երկիրս դառնալով՝ կսկսին պտուտկել. եւ ահա այն պտուտկելն է որ մեր լեզուով *փոքորիկ* կասեմք:

ՍՄՊ. — Մթնոլորտի շոգիներէն, այսինքն ջրային եւ հրային գոլորշիներէն խտացած ու միացած ջրոտ նիւթք *ամպ* կասուի, որ շատը մէկտեղ ժողվուած բարձր օդոց մէջ կլողան այլ եւ այլ գունով ու ձեւով. ուստի որչափ որ թեթեւ լինին ամպերը՝ այնչափ վեր կբարձրանան, եւ որքան թանձր լինին՝ այնքան վար կիջնան: Իւրեանց գոյները արեգական շառաւիղներէն կձեւանան. իսկ ձեւերը — քամիներուն փչուածքէն:

ՄԷԳ. — Մեզ կամ *մառախուղը* (մշուշ) ամենաթանձր ու խիտ շոգիներէն կձեւանայ, որ երկրիս ու լեռանց գլուխներուն վերայ կլինին. եւ այն է պատճառը որ շատ անգամ մարդիկ բարձր լեռներու վերայ ելնելով՝ թանձր մառախուղով կշրջապատին: — Մառախուղ եղած տեղերը օդը թանձր ու վնասակար կլինի, եւ երեկոյեան ժամանակ եղանակը կցրտանայ. վասն զի արեւք մայրը մտնելուն պէս (ըստ երեւութին)՝ այն թանձր շոգիքը կզովանան, որով ամառ ժամանակ տեսակ տեսակ հիւանդութիւններ կպատճառեն, ինչպէս որ յայտնի է ցած դիրքով քաղաքներուն ու գիւղերուն բնակչաց հիւանդութիւններէն: — Կպատմեն թէ 1775-ին նոյեմ. 8-ին Համբուրգ քաղաքի մէջ մի այնպիսի թանձր մառախուղ եղաւ, որ 10 քայլ հեռաւորութիւն ունեցող առարկաներն անգամ չտեսնուեցաւ. ուստի եւ քաղաքին բնակիչքը մթութեան պատճառաւ տուներէն դուրս չելան, մինչեւ որ կէսօրուան ժամանակները արեգական ճերմութենէն հետ զհետէ թեթեւնալով՝ սկսաւ վերանալ: — Ամպի եւ մառախուղի մէջ եղած տարբերութիւնն այս է, որ ամպերն աւելի թեթեւ լինելով՝ վերին օդոց մէջ կպտըտին. իսկ մառախուղը, որ ծանր է ամպերէն՝ — աւելի մօտ կլինի երկրիս:

ԱՆՁՐԵՒ. — Անձրեւը ջրային գոլորշիներէ ձեւացած ամպերէն կյառաջանայ. վասն զի երբ վերին օդոյ մէջ շոգիքը ցրտութեամբ ծանրանան եւ արեւու ջերմութենէն մթնոլորտը թեթեւնայ, ամպերը լուծուելով կամ ջուր դառնալով ջնն կրնար իրենց բարձր տեղերը մնալ, այլ կտոր կտոր բաժնուելով՝ երկրիս վերայ կթափին երբեմն խոշոր եւ երբեմն մանր կաթիլներով: — Խոշոր կաթիլները ամառ ժամանակ կլինին. վասն զի բարձրագոյն տեղերէ իջնալով՝ ճանապարհին ուրիշ գոլորշեաց հետ կմիանան ու այնպէս երկրիս վերայ կթափին. իսկ մանր կաթիլները՝ ձմեռ ժամանակ. վասն զի ցրտութենէն խտացած ու թանձրացած օդը ջնոլորուր ամբողջապէս երկիրս հասնիլ, այլ մանր կաթիլներ կբաժանէ: Անձրեւ գալուն պատճառը շատ անգամ այլ եւ այլ կողմերէ փչող քամիներու հոսանքներուն ցնցմունքը ամպերուն կամ գոլորշիներուն մէկտեղ դիզուիլն է, երբեմն օդոյ տաքութեան աստիճանին փոխուելովը եւ երբեմն օդոյն մէջ ելեքտրականութեան շատնալովը: Այս յայտնի է որ անձրեւի գալը երբեմն քանի մի ժամ յառաջ կիմացուի՝ երկնքին երեսը դիզուած խիտ ամպերէն. բայց եւ կարելի է մէկ օր վերջը լինելու եղանակն իմանալ. վասն զի երբ արեւը ելնելու եւ մտնելու ժամանակ երկինքը կարմրագոյն լինի, (որ նշան է թէ օդոյ մէջ այնքան քիչ են գոլորշիքը որ անձրեւ կամ մրրիկ ջնն կարող պատճառել) — պարզ կգուշակուի առաջիկայ օրը. բայց երբ շիկագոյն կամ մթագոյն լինի, (որ նշան է թէ շատ գոլորշիք կան օդոյ մէջ) — եղանակի պղտորութիւնը կիմացուի: — Այս հիման վերայ է ահա Աւետարանին այն խօսքը՝ թէ „Յորժամ երեկոյ լինի՝ ասէք պարզ լինիցի, զի կարմրացեալ է երկին. եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շառագունի տրամութեամբ երկին“: (Մատթ. 16, 2.)

Պատահած է երբեմն նաեւ արիւնի, ծծումբի, խէժի, ցորենի եւ քարի անձրեւներ, ինչպէս որ Հռովմայ շինութեան 619 թուականին՝ Հռոմ քաղաքի մէջ կարմիր անձրեւ եկաւ.

1649-ին Քոփենհագենի մէջ՝ ծծումբէ անձրեւ, այսինքն դեղնորակ՝ ծծմբային մասունքով խառնուած.

1693-ին Իռլանդիոյ մէջ իւղային կամ խժային անձրեւ, որ 15 օր երկրիս վերայ մնալէն վերջը՝ թանձրանալով սեւացել ու ցամաքել է.

1803-ին Գաղղիոյ Նորմանդա քաղաքին մէջ՝ քարէ անձրեւ, որոց ամենամեծը 6 հօխա կամ 18 ֆունթ եղած է.

1807-ին Հայաստանի մէջ ցորենի անձրեւ, եւ այլն, որոց պատճառն է անձրեւի ժամանակ քամիին սաստկութիւնը, որ գետնին երեսէն զանազան նիւթեր, եւս եւ կենդանիներ, այսինքն գորտեր ու ձկներ մինչեւ բարձր տեղեր հանելէն յետոյ՝ անձրեւի հետ վար կթափէ:

ՅՕՂ. — Գարնան եւ աշնան ժամանակները երկրիս բաց տեղերուն եւ մանաւանդ բոյսերուն վերայ մարգարտի հատիկներու նման երեւցող ջրային կաթիլները՝ *ցօղ* կասուի: Հիներուն կարծիքը երկար ժամանակ այս էր թէ ցօղը անձրեւի փոքրիկ կաթիլներէն կյառաջանայ՝ օդոյ ցրտանալուն պատճառաւ. բայց դարուս սկիզբները Ուէլս անունով շոտլանդացի բնագէտը (+ 1817) առաջինն եղաւ որ տեսնելով թէ ցօղը միակերպ ջերեւիր զանազան նիւթոց վերայ, հին կարծիքները հերքեց, եւ իրեն ասուածեանը պարզ ապացոյց առաւ երկրիս վերայի քանի մի մարմինները, այսինքն խոտերը, տերեւները, փայտերը եւ այլն, որք ցորեկը արեգական զօրութենէն տաքնալով՝ գիշերուան եւ առաւօտեան ցրտերու ժամանակ՝ իրենց ջերմութիւնը դուրս կուտան, եւ պաղ օդէն խտանալով՝ ցօղ կհանեն: Իրաւ որ ցօղը փայլուն մետաղներու վերայ գրեթէ ջերեւիր. վասն զի նոցա արտադրական զօրութիւնը շատ թոյլ է. մինչդեռ մի եւ նոյն միջոցին շատ բոյսերու՝ մանաւանդ կաղամբի վերայ՝ ցօղը այնչափ առատութեամբ կտեսնուի, որ տերեւներն անձրեւի պէս ջրատելէն յետոյ՝ նոցա խորերն անգամ կլեցընէ: — Այս յայտնի է որ ցօղը պարզ գիշերները միայն կուգայ, եւ բաց տեղերուն՝ մանաւանդ մշակուած երկիրներուն վերայ աւելի կլինի քան թէ քաղաքներու եւ քարոտ տեղերու վերայ: Մեծնորտի դրութենէն եւս երբեմն ցօղ կիջնայ: Ամենէն աւելի ցօղը երկինքը պարզ եւ օդը հանդարտ եղած գիշերները կուգայ, բայց եթէ երկինքն ամպոտ լինի՝ ցօղ չի գար. վասն զի ամպերն իրենց ելեքտրական տաքութիւնը երկրիս հաղորդելով՝ գետինը քիչ կպաղի:

Յօղին երկրէս ելնելուն մէկ գլխաւոր ապացոյցն եւս այս է՝ որ եթէ մէկ որ եւ իցէ բոյս շիշէ անօթով փակես՝ այնպէս որ վրան բան իջնալ չկարողանայ, դարձեալ առաւօտը տերեւները ցօղոտուած կտեսնես:—Ծառերու տերեւներուն վերայ եւս ցօղ կիջնայ, եւ անկէց կբաղկանայ Հայաստանի քաղցրահամ *գազպէն* (մանանայ), ինչպէս նաեւ արաբիոյ եղեգներուն մէջ շաքարը եւ մեղուաց ստամոքսին մէջ՝ մեղրը:

ՍԻԻԳ. — Երբեմն ամառը արեւը մտնելէն վերջը փոքրիկ անձրեւի պէս թեթեւ ցօղ կուգայ՝ առանց մեծնորտին մէջ ամպ երեսելու, որ *երեկոյեան* *ցօղ* կանուանեն երոպացիք, եւ մեր լեզուով *սիւշ* կասուի: Սիւգի տարբերութիւնն այս է որ ցօղի պէս երկրիս մարմիններէն չարտադրուիր, այլ մեծնորտի շոգիներուն խտութենէն կիջնայ:

ԵՂԵԱՄՆ. — *Եղեամն* (ижей) կասուի այն սառած ցօղը, որ գարնան սկիզբներն ու աշնան վերջերը՝ գետինն պաղութիւնը զրօյէն վար լինելուն պատճառաւ կծուանայ եւ ճերմակ սիւռոցի պէս երկրիս երեսը կծածկէ:

**ՁԻՒՆ.** — Ձիւնը խտացած ամպերէն կյառաջանայ. վասն զի երբ օդը սաստիկ ցրտանայ եւ գրօյէն վար պաղի, ամպերը կամ մթնոլորտի ջրային շոգիները կսառին, եւ բիւրեղանման ու աստեղածեփնջիկներով հետ զհետէ վար կթափին: — Ձիւնը օգտակար է ձմեռուան սաստիկ ցուրտերէն գետինը տաք պահելու, մշակուած հողերը պարարտացընելու եւ գետերուն ու առուակներուն ջուր հաղորդելու:

**ԿԱՐԿՈՒՏ.** — Ամպերը օդոյ ջերմութենէն լուծուելով՝ երբ անձրեփի կաթիլներու պէս վար ընկնելու ժամանակ ցուրտ օդոյ հանդիպին՝ կխտանան ու կպաղին, եւ սիսեռի մանր ու խոշոր հատիկներուն պէս երկրիս վերայ կթափին ու *կարկուտ* կամ *քարկուտ* կասուին, այսինքն քարի նման թափուող կուտեր կամ հատիկներ:

**ՈՐՈՏՈՒՄՆ.** — Օդերեւոյթներու մէջ ամենէն աւելի մարդուս վերայ սարսափ բերողը որոտմունքն է, այսինքն ամպերուն գոռալը, որ ձմեռային ու բորակային նիւթոց ելեքտրականութենէն կյառաջանայ. վասն զի երբ ամպերը մէկ մէկու վերայ դիզուելով, վերինները վարիններուն սկսին մօտենալ, եւ վարինները հակառակ քամիին պատճառաւ աւելի վար ջկարողանան իջնալ, իւրեանց մէջի օդը փակուելով կրճնշուի. եւ որովհետեւ անկարելի կլինի օդուն երկու ամպոց մէջ ճնշուած մնալը, ամպերը պատռելով դուրս կելնէ օդը, եւ թնդանօթի զարնուածքի պէս ահագին շառագիւն հանելով՝ որոտմունք կպատճառի երբեմն կայծակ հանելով եւ երբեմն ոջ:

